



ԻՐԱԾ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ
ԱՏՐԻՎՐԵՈՒԹԵՄՆ
ՀԱՅՈՒ
ՄՐՈՒՍԱԴԵՄԻ

Օ. ՏԵՐԵ

Զ.

1976





ԿՐՈՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱԼԱՍԻՒՐԱԿԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

976

Յունիս

Թիվ 6

1976

June


No. 6

S I O N

VOL. 50


A MONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem



St. James Press
Jerusalem





ՅՈՎԻԻՆ ՈՒ ՅՈՏԸ

Եղած են և ցայսօր կան թերես տակաւին կրօններ, որոնց մէջ հաւատացեալն ու հաւատքի պաշտօնեան — իւրաքանչիւրը իրենին միայն գիտակ և ինելամուտ — անտեղեակ են մին միւսին պարտականութեանց և իրաւունքներուն, և, այդ պատճառաւ, յոյժ շփոթ են անոնց ծանօթութիւններն ու գիտակցութիւնը՝ իրարու հետ իրենց փոխազարձ յարաբերութեանց մասին:

Դասակարգային խարողութեան ոգիէ բղխած այս տարականոն վիճակը, որ արդինքն է ընկերային կեանքի և կարգի հին ըմբռնումներու, գոյութիւն չունի բնաւ Քրիստոնէութեան մէջ: — «Կը ճանչնամ իմիններս, ու կը ճանչցուիմ իմիններէս» աւետարանական պատգամը, որքան Հոգերանական՝ նոյնքան բարոյական իմաստով կշուռած վճռո մը, մէկն է այն նշանաբաններէն՝ որոնք յոտակօրէն և միանգամայն կը պատկերացնեն ըսողներուն և լուղներուն, կառավարողներուն և կառավարուղներուն առընչութեանց օրինաւոր բնոյթը:

Անոնք զիրար կը ճանչնան՝ միմեանց նկատմամբ իրենց վերարերումի հիմնական և ճեւական բոլոր մանրամասնութիւններուն մէջ: Գաղտուասուցումի (esotérique) գրութիւնը տեղ չունի քրիստոնէական ըմբռնումին մէջ, որուն համար ամէն բան՝ խորհուրդ, դաւանանք, վարդապետութիւն, պաշտամունք, ծէս, կանոն՝ հասարակաց են, այսինքն հանրամատչելի ամենքին: Որովհետեւ Եկեղեցին, իրրե կազմ և իրրե կեանք, որքան մէկին նոյնքան միւսին կը պատկանի. ամէնքը հաւասարապէս լինելով, Աստուծոյ Հոգւոյն կենարար ներգործութեամբը, անոր բաղկացուցիչ տարիքքը: Ու ասկէց է նաև երկուստեղ գոյաւորուած տեսակ մը հակակչուի այն յօրինուածքը, որով հօտն ու հովիւը, ժողովուրդ և կղեր, ինք-

նարերարար ենթարկուած կը մնան միմեանց փոխադարձ հսկողութեան:

Հօսը գիտէ այսպէս թէ իր հովիւը կատարելով իր պարտականութիւնները հանդէպ իր հոգեոր խնամքին յանձնուածներուն, այսինքն իր վրայ ապրեցնելով սփոփարար խօսքի, բարի վարքի, գործօն սիրոյ, անկեղծ հաւատքի և սուրբ կեանքի անձնաւորուած օրինակը, իրապէս պտղարերած պիտի ըլլայ ձեռնադրութեան շընորհքը, որ իրեն բաշխուած էր մարդարէութեամբ՝ այսինքն իր ապագային նկատմամբ լաւատես նախազգացումի ներնչութիւններով. թէ որքան աւելի կարենայ՝ քարոզութեամբ և ուսուցումով՝ հոգեոր վերանորոգութեան աղբիւր զարձնել Ս. Գիրքը, նոյնքան աւելի պատկառելի պիտի ընծայէ ինքինքը հանրային զգացումին, և որքան աւելի յարատեէ իր պարտաճանաչութեանը մէջ, նոյնքան աւելի ապահովապէս պիտի կարենայ հանդիսանայ պատճառ իր և իր ժողովուրդին հոգեոր փրկութեանը:

Այսուհետեւ գիտէ հօսը թէ հովիւն պարտականութիւնն է արժեցընել իր հեղինակութիւնը ոչ թէ իրքն խստադատ տէր մը, աւելի կամ նուազ բուռն կերպերով, այլ իրքն ընտանիքի անդամ մը՝ որ պարաի միւս ամէն մէկ անդամին հանդէպ, իրաքանչիւրին սեռին, տարիքին և խառնուածքին համեմատ, գտնել վարժունքի պատշաճ եղանակ մը և արդարամիտ սիրով քաղցրացած բայց աղդու այնպիսի մի ընթացք որ, հաւատքի լոյսէն բդիսած համատարած պայծառութեան մը մէջ, սիրտերը կարենան մօտենալ իրարու, և միմեանց մէջ կարդալ բարիին օրէնքը, և անոր պարտաւորիչ ներգործութեան ներքեւ զդալ ինքինքին:

Ու պէտք չէ անդիտանալ թէ երկուստեք պարտականութեանց և իրաւունքի փոխադարձ այս գիտակցութիւնը օդտակար միայն կրնայ ըլլայ հանրային բարոյականի տեսակէտով: Վասն զի այդ կերպով է մանաւանդ որ մարդուն մէջ հնար կ'ըլլայ իր ճշգրիտ ձերին հասցնել պատասխանատուութեան զգացումը, այսինքն իրականացնել իմացական և բարոյական աղասութիւնը, որ ամենէն գեղեցիկ ծնունդներէն է քրիստոնէական գաղափարին: Եւ խսկապէս, հովիւը կը պատուուի միայն իր հօտին միտքին մէջ, երբ այս վերջինին՝ տարիներու ծանրութեան ներքի ընկճուած կամ իրենց երիտասարդութեան զարունին մէջ այս կամ այն կերպով ու պատճառաւ գժրախտացած անդամները ամէնքն ալ իրաւունք կը համարին իրենց այն յոյսը տածելու թէ Աստուծոյ պաշտօնեան, որ իրենց հոգիներուն վերակացութեան պաշտօնն է սուանձնած, պարտաւորութիւն ունի գաւկի կամ եղրօր գորովով վերաբերուելու իրենց:

Նոյնպէս, Աւետարանի բարոյականն է որ կը փառաւորուի, երբ, հովիւն և հօտին դիտակցութեամբ և գործակցութեամբ՝ հասարակութեան ծոցին մէջ մինչ մէկ կողմէ հանրային նպաստի ձեռնարկ կը կազմակերպուի, իրենց կեանքի նեցուկներէն զրկուած

ակար էակներուն օգնութեան միջոցներ տնօրինելու համար, միւս կողմէ իբրև բարեգործական անխախտ կանոն կը հռչակուի արդարութեան սա սկզբոնքը թէ ընտանիքը սրբութեան խորան մրն է և ընտանեկան ինամքը անոր հանապազորդ պաշտամունքը, և թէ՝ հետեաբար՝ հաւատուրաց և անհաւատ են ընտանիքի այն անդամները որոնք կը թերանան իրենցներուն խնամարկութեան իրենց պարտականութեան մէջ, հանրութեան ուզելով թողուլ անոնց հոգը. թէ հանրային կարեկցութեան և աջակցութեան իրաւունք ունենալու համար բաւական չէ միայն կարօտ լինել անոր, այլ հարկ է նաև արժանի լինել անոր:

Իսկ այդ պայմանը, այսինքն արժանաւորութիւնը, մարդու մը, կամ՝ զոր օրինակ՝ այրի կողմէ մը համար, իր անցեալին վկայութեամբը միայն պէտք է մատնանշուի: — Անոր նախընթացը եղած է բարի գործերու կեանք մը. իր զաւակներուն կրցա՞ծ է աւանդել պարեկշտ գաստիարակութեան մը չնորհները. իր յարկին ներքի պատսպարան ընծայա՞ծ է երբեք անտուն և անտէրունչ թրշուառներու. հաւատացեալ եղբայրներու և քոյրերու մատուցա՞ծ է, ի հարկին, անձնական սպասարկութեան սփոփանքը. հետամուա եղած է առաքինութեան. իր անհաւական բարոյականին մէջ եղած է ամրիծ. . . խիզճը ինքն իր մէջ պէտք է իսկոյն լոէ պատսախանը այս հարցումներուն, երբ քրիստոնեայի մը՝ իր հասարակութենէն ընդունելիք բարերարութեան վրայ է խնդիրը. վասն զի բարիքը եթէ կրնայ յաճախ հատուցումը ըլլալ բարիքի մը, միշտ տրիտուրն է սակայն բարութեան:

Զմտածուած պատահականութեամբ մը չէ բնաւ որ Առաքեալը Եկեղեցւոյ առաջին հովիներէն մէկուն՝ իր ձեռնասուն Տիմոթէոսի ուղղած պատուէրներուն մէջ կը հիւսէ նաև անոր յանձնուած հօտին պարտականութեանց կարեռագոյնները: Ինչպէս հովիւին գաղափարը անիմաստ պիտի ըլլար առանց հօտի գաղափարին, ու փոխաղաքարաբար, նոյնպէս անհասկնալի պիտի րյային մէկուն պարտականութիւնները՝ առանց միւսին իրաւունքներուն, և հակաղաքարաբար: Անոնք զիրար կը լրացնե՞ն միայն այնքան գեղեցիկօրէն. և այդ ամբողջացումէն է որ ի լոյս կուգայ «սիրոյ օրինագիրքը», քրիստոնէական բարոյականին կենցաղականունը, որուն մէջ կը պատկերանայ հովիւին և հօտին սրտանուէր գործակցութեամբ ոգեսորուած կեանքը՝ «խաղաղութեան ջուրեր»էն ափնածիր Հաւատքի այն «գալարուտ»ին վրայ, որ Աւետարանի դաշտն է ինքնին:

Թ. Պ. Գ.

ԿՐԾՈՎԱԿՄԱՆ

ԱՍՏՈՒԱԺԱՅԻՆ ՏՆՈՐԻՆՍՈՒԹԻՒՆ

Անեցէք և բազմացէք և լեցուցէք երկիրը, և տիրեցէք ատոր: Երկրի տիրելու բաղանջը բնածին է ամէն ազգի մէջ: Կան ազգեր որ կրցած են լիովին իրականացնել իրենց այդ բաղանջը և կան որ մնացած են կէս ճաժրան և չեն յաջողած տիրել երկրի: Անոնք որ յաջողած են, յայտնապէս կը ցուցնեն թէ հետևողներ եղած են աստուածային պատուիրանին: Անոնք կատարած են տիրական պատուէրը, աճած են, բազմացած են, լեցուցած են երկիրը, և այդպէս տիրած ատոր: Խսկ անոնք որ չեն գործադրած Աստուծոյ Հրամանը, պէտք եղած չափով չեն աճած և չեն բազմացած, և չեն լեցուցած երկիրը, բնականարար և չեն կրցած տիրել ատոր:

Այս վերջինները, ձախողաճները, սխալ տրամաբանութեամբ մը ուղած են իրենց ձախողութեան պատասխանատուութիւնը ուրիշներու վրայ ձրդելի, փոխանակ ընդունելու թէ իրենք են որ թերացած են իրենց պարտականութեան մէջ: Երկրի տիրանալու համար Աստուած պայման դրած է աճիլ, բազմանակ և լեցնել երկիրը. անոնք որ այդ պայմանը չեն գործադրած, այդ պարտականութիւնը չեն կատարած, ի հարկէ պիտի զբկուէին նաև երկրի տիրելու իրաւունքին:

Ամէն իրաւունք կ'ենթադրէ նախրնթաց կամ զուգընթաց պարտաւրութիւն մը, երկրի տիրելու իրաւունքն ալ պայմանաւորուած է՝ աճումով և բարդացումով զայն լեցնելու պարտաւորութեամբ: Ուրեմն իրաւունքը ճեռք բերելու կամ պահպանելու համար անհրաժեշտ է կատարումը համապատասխան պարտականութեան:

Անեցէք և բազմացէք և լեցուցէք երկիրը, և տիրեցէք ատոր: Տիրական այս պատուէրը շատ բնական և բանաւոր է ըստ ինքեան, հետևաբար ատոր հակառակ գործողները գատապարտուած են զրկուելու՝ երկրի տիրելու աստուածպարգև իրաւունքին:

Աստուած նախ առուած է մարդուն աճելու և բազմանալու կարողութիւնը և ապա պահանջած է որ մարդիկ լեցնեն երկիրը, և այդ գործին իրեն վարձք՝ տիրեն ատոր: Արդ անոնք որ վարձատրութեան ակնկալութիւն ունին՝ պէտք է որ նախ կատարեն իրենց պարտականութիւնը, աճին, բազմանան, լեցընեն երկիրը, պապա տիրեն ատոր, և իրենց աշխատանքով վերածեն զայն երջանիկ բնակավայրի մը: Այդպիսի երկիր մը արդարի կը դառնայ աստուածահանույթ գրախու մը՝ իրազործուած Երկնաւորին և երկրաւորներուն ցանկալի ուործակցութեամբ:

Ուրեմն անոնք որ կը հնապանդին Աստուծոյ կամքին և կը գործադրեն առոր Հրամանները՝ կ'ընդունին անէ իրենց վարձքը: Խսկ անոնք որ կը թերահան իրենց պարտականութեան մէջ՝ կը կորսնցնեն իրենց վարձքը և կը զրկուին այն մեծամեծ բարիքներէն որոնց կը ցանկային հոգւով չափ:

ՆՈՐԱՅՅԻ ԱՐՔԵՊՈ.

ՎԱՐԱՆ ԳՈՂԹՆԱՑԻՆ

Աշխարհի մեջ այս անցաւոր,
Որ կը քըռի
Դէպի վայրկեանն իր վեհագոյն,
Երջանկութիւնն բառ մըն է լոկ
Մեր պատրանքներն ոսկեզօծով:
Նոր առաջաստ մըսած փեսան,
Լրսեց օր մ'ալ,
Թէ մեռած էր Խալիֆ Օմար,
Խոկ յաջարդն իր՝
Սուրհանդակներ զրկած փուրով
Զինքը կ'ուզէր:

Այժմ կ'զգայ Գողքնի իշխանն,
Խախտատինքը անգորութեան,
Երբ մարդ գերի է դիպուածին
Նև անպաշտպան,
Դողալով ամէն վայրկեանն
Հովէն մահուան:

Զրյանձնելու համար ինքզինքն
Փետուոզներում,
Իրեններուն նետ համախոհ
Փախաւ զաղտնի,
Զգելէ վերջ նակատագրին
Նորապրսակ կիմն իր չըքնազ,
Քոյր սիրելին:

Կերչին անգամ իր աչքերութ
Պապացին սարերն Գողքնի,
Կանքեղալոյս դարձան չուրեր
Իր մութ ճամրան լուսաւորազ:

Վերջին ամգամ զօղանչեցին
Զանգակմերը տանարներում,
Ծուղարկելու Գողքնի իշխանն
Մահուան ստոյզ:

Կ'երք-ար Վահան,
Ճամրաներէն զաղտնածածուկ
Նև զարտուղի,
Խորին աչքերան արցունք պրզտոր,
Խոկ կուրծքին տակ՝
Անտառ մ'անհում կարօւներու:

Բայց էր հաւտար գրոյցին եին,
Թէ իր տունին մոխրը պազ
Ճանկըռտելով պիտի մեռնի,
Ոյ կը պակէ սիրտն հարազան
Օնախէն իր:

Լերան տափին՝
Կազիմիները ասոլատելիք:
Ռունենիները մըտած սուզի,
Կը քափէին արցունք, արցունք
Վարսերն իրենց հսոսդ չուրին:
Կ'երք-ար Վահան,
Մարտելով վիշտն իր անդարման:

Քանի՛ օրեր, տիւ ու գիշեր,
Ա՛լ չէր յիշեր,
Քալեր էր ան աստանդական,
Լեռնանցքներէն ու դաշտերէն
Հայրենական,
Բարրառելով լրուրեան հետ
Միշտ անքարքառ:
Մարմինն իրմէն կարծես բակուած,
Իրերն իր շուրջ կը քուէին
Անիրական:
Պաշտպանուրեան համար չունէր
Սուր, երիվար,
Հետեւորդներ ու համհարզներ
Իշխանական.
Ապաւինած Աստծոյ միայն,
Կը բալէր ան,
Վազուան կայանն որոշելու
Ա՛լ անկարող:
Ամայուրինն կը բանար քե
Իր երազին որ չունէր վերջ:

Իրիկուն էր երբ կանգ առաւ
Լերան ուսին նստած խազազ
Վանքի դրան,
Որ կը կայուէր Սադմոսալանն:
Յօզմուրին կար իր ստերուն,
Իր եղողին,
Կարծես բակած էր դարերով:

Բաց էր դարպասն մենաստանին,
Որ մուրք առած իր առևրում՝
Վեր էր նետուեր երկնին մէջ.
Էղանեց ինչպէս Հայոց երկրին:

Վանականներն ընդունեցին
Կինքը սիրով,
Մըզգային թէ երիք անձանօք
Զէր ուխտաւոր սովորական,
Հակառակ իր հայած, մաշած
Խերպարանքին,
Զգլստներում փոշերաբաւ:

Հեռու տիգմէն ու ժըլնորէն
Այս աշխարհին,
Վանցնէր օրերն
Խորն հեռաւոր մենաստանին:
Կ'զմայլին վանականներն
Վարքին վըրայ իր բարեպաշտ,
Որ ազօր ժակ, արցանքներով
Կը պատմէր սուզն իր հոգին
Անոր որ տէրն էր սիրուերուն,
Սպեղանի հոգիներուն:

«Այս է հանգիստն իմ յաւխուան»
Կըսէր յանախ,
«Տէր, մի՛ կոտրեր սիւնը յոյսին
Առած որում»
Կը խեղգուի մեր խեղն հոգին,
Մանրութեան տակ կասկածներուն:
Խորը վանքին,
Պատերում մէջ այն խստակրօն
Կը ճըգնէր ան,
Լեցնելով իր աչքն ու հոգին
Երկինքներու քաղցր լոյսով:

Սուրի, հուրի այն օրերուն,
Երբ պարմաններ արեան նամբէն
Կը զմէին երազն իրենց,
Քաջազանգուր իշխանն Գողքնի,
Գերդաստանին նրազն ոսկի,
Լըքած այսպէս թօրն ու աշուն
Ու ծիրանին,
Զէնն ու փառքնը յաղը գրոհին,
Մենաստանի որմերէն ներս
Իշած ծունդի՝ կ'ազօր կը խոր,
Հոգին ըրած ճոյլ աշտանակ
Իր հաւատքին:

Մետախս մետախս և թել առ թել,
Կ'յինար իրմէն արիւնն իր վառ,
Դեղին մախիր երեսներուն:
Տարիներով ան ժարշ տուառ
Մարմերն իր խեղն,
Տարիներով չըմտան քուն
Աշուներն իր:

Վանքը Հայուն,
Կը մրտածէր իշխանազունն,
Հոգետուունն էր Հայ հաւատքին,
Հացը արդար, գիմին մահուր
Սիրունգներուն:
Վանականներ իրքն դպիր,
Քերքող, ծաղկող ու երաժիշտ,
Կը փոխէին նրիքն եղափի
Գիւտն ընելով Հայ մրտածման
Ադամանդին:

Սակայն շուտով յայտնի եղաւ
Ինքնուրիւնը փախստական
Պայագատին.
Դամասկոսի մոք էմիրի
Մարդերը զիթք կը փնտուին:
Վանահայրը մենաստանին,
Պատուեասի մը սարսափէն
Խորակար,
Ճամբու դրաւ հետապնդուող
Իշխանազունն,
Հուկառակ իր սիրտի ճայնին:

«Գնա՛, որդեակ»,
Կըսէր վանքի վերակացուն,
Արցունէն աչքին.
«Երկին նամբան տառապանէնն,
Անհունիներէն կ'ըսկրսի միշտ
Ու կը հասնի Տիրոջ սիրտին»:

Վահան առանց տրոնշելու,
Ճակատազրի մատին երլու,
Կը հեռանար
Դեպի խորերն անապատին:
«Օրինեալ ըլլայ կամքն Անեղին,
Երկիր քարիքն է Աստուծոյ,
Ճամբաններէն խորախորիւրդ
Մենի կը քակնէ իր մեծ սիրայն»:

Այսպէս նըման մեզուներուն

Այն ծաղկածուժ,
Կամ կրտաքաղ քռչութեներուն,
Կր շրջէր ան վաներէ վանէ,
Անապատներն ու կայաններ
Ճզգնողներուն,
Տիրոց զուքին ապաւինած:
Ալուէս իր որդ,
Ռոնէր քռչունն ալ իրեն բոյն,
Բայց իմք չունէր բարձ հանգիստի:

Ո՞վ էր գրեր ամիջակուռ
Գիրն իր նակախն.
Ծնած էր ինք օրքանին մէջ
Տառապանքին,
Օսար ճայնիսկ հողին վըրայ
Իր հայրենի,
Սաղարքն ինչպէս հովի բերթին:

4

Տարիներ վերջ,
Թափառելէն այլևս յոզմած,
Մրտապատառ ու միայնակ,
Ռուեց վերջ տալ
Կեսնիք զնացքին այս երկրաւոք:
Տագնապակոծ՝
Ցանձնեց ինքզինք յօժարակամ
Դուին մըստոռ
Ամիրայի տեղակալին,
Խոկ այս վերջինն՝
Գանձ մը գլուստ մարդու նըման,
Դաւակոսի ինքնակալին
Արկեց որսն իր:

Զինուորներէ առաջնորդուած,
Անցաւ Ռւուհա, անկէ հառան,
Կրտրելէ վերջ
Անապատը անծայրածիր:
Հակառակ իր մարմնին հալած,
Ռուերն այրոս աւազներուն,
Հողին լցուն էր բերկրանեռվ
Անօրինակ:

Քրիստոնեայ էր, այժմ կ'երքար
Իր Աստրծոյն տալու ինքզինք:
Շաբարներ վերջ՝ կը հասնէին
Քաղաքամայրն արքայական,
Աւր անցուցած էր տարիներն
Պատանուքեան:

Նանօքներէն ոչ ոք կրնար
Զինի նանչընալ,
Մաշկակապած ու գծծակերպ,
Ճրգնաւորի տարագին տակ:
Ո՞ւր էր ազուոր պարմանին այն,
Դիւնապետն արքունի տան,
Որ կը շողար բազմութեան մէջ,
Ինչպէս հասած հատիկ նրան:

Բարեկամներ երբ հարցնէիմ
Իր վիճակի մասին քշուառ,
«Քրիստոնեայ եմ» կը յարէր ան,
«Եմ Աստուծոյս սիրոյն համար
Յանձն եմ առեր,
Աղքատութիւն ու տառապանի.
Ան որ միրեց մարդերն ամէն
Գուքոյ անբար,
Իւ մեզ համար անարգական
Մահն յանձն առաւ:

Սմիրնապետն երբ իմացաւ
Խոստավանեցէն քարտուղարին,
Ռուզեց որ իր առջի բերուի
Ասդիրան այն,
Որ ուրացուծ կրօնիք սուրբ
Խաւական,
Քրիստոնեայ էր դարձեր նորէն:

Վերակացութ արքունիքին,
Ան որ կնիք ունէր ձեռքին,
Կուրծքին վըրայ պատուանշան,
Առաջնորդեց Գողքնի իշխանն
Իր պետին քով:

Պատմուանին ներքն մետախս,
Ջեռքը սուրին կ'ըսնասէր լուռ
Հաւատապետն Խոլամներուն:
Վերակացուն երեք անզամ
Ռունիկի առջևն վեեայթին,
Ցարեց մեղմավ.

«Տէր խստադատ և տէր արդար,
Փառաւորեալ աչքն Ալլահին,
Ամուր փահան մեր հաւատքին
Օրէնքներուն իր սրբազն,
Ահա քըշուառն այս աղերախս,
Որ տարաւան մը համար միայն
Արտօնուեցաւ
Մեկնելու իր ծննդավայրն,
Զեր նախորդէն աստուածարեալ:
Տարիներով ինքզինքն ծածուկ

Պահելէ վերջ փախստական,
Բերաւած է հոս'
Ուրանակ յետոյ կրօնքն
Մեր սրբազն»:

«Անփորձ տրդայ», յարեց Խալիֆ,
Զայնիմ տալով սաստ մ'ապահով.
«Ինձ կը քաւի,
Թէ չարժերը լեռներուն Հայ,
Կաշկանդեր են միտք ու հօգիդ,
Դարձուցեր Շեղ իրենց ծառայ:
Պարզեած է Աստուած Քեզի
Զիրքեր ընտիր,
Կանչուած ես գում պարտի, Փառքի,
Խօսուումներուն ապազայի:
Ստրուկներուն վայել է լոկ
Կրօնքն անմիտ քրիստոնեայ.
Ինչո՞ւ տանի անպատի
Սւազներուն մարմինք մեր,
Մեռելներէն դեռ չըլանչուած:
Գովեստն Անոր՝
Որ իշխանն է տիեզերին
Եւ սիրտերուն,
Չեռքը որուն գիտէ քանալ
Զինք դաւանոց հոգիներուն,
Դրախտն աննառ,
Ուր կը հոսին կարի, մերի
Ու գիթիի,
Գետեր ամաւշ ու պաղպաջուն:
Ցաւերժահարս կոյսեր հազար,
Շուշաններու պէս սպիտակ,
Կը բաշխեն հոն, տիւ ու գիշեր,
Հեշտանքն իրենց:
Որոնց աշբէն ծորած շիքերն
Աւելի բաղցը են ու փայլուն
Քան ամառուան շողն արկուն:
Բայց զարշելի անհաւատներն,
Որոնք չունին կրօնը ոուրը
Եւ ծշմարիտ խվամանկան,
Խպիօն առնէ պիտի զանոնի
Ճանձերուն մէջն իր ահեղի,
Եւ զգուանենով
Պիտի թրքնէ անոնց վըրայ»:

«Գիտեմ ձիրքերն իմ հոյանուն,
Գեղեցկութիւնն ու քարմութիւն
Կանցիթի անդարձ,
Ինչպէս խոսի չորցած ծղոս:

Ամէնէն վերջ
Ափ մը փոշի է մարմին մեր
Ժամանակի ափին մէջ բաց:
Մարդն ինք պէտք է
Շինէ նաւը նշմարտութեան,
Իր հոգիին համար անման,
Թիակներով սսկսարաս,
Նաւարկելու՝
Ովկիանոսին վըրայ մահուան,
Դէպի կայանն լուսակառոյց,
Ուր լող կուզան
Հոգիները արդարմերուն,
Զերք կտոր սաստ և զերք փայլակ,
Հոն գրտնելու այ անկորուատ
Ինչ որ մեզի այս կեանքին մէջ
Զըլացուեցաւ:
Կեանքէն յազնած հոգիս կ'ուզնմ
Խմ Աստուծոյս տանի ընծայ:
Չունին երկիւղ մտակն սույզ,
Որ բըշուառին ազատարար
Ղրկեց Աստուած,
Իր ձեռքին մէջ կայ ջան մ'անշէկ
Կեանքէն անդի՞ն
Մեր նանապարհն լուսաւորագ
Եւ տանելու մեզ էակին
Այն պաշտելի,
Որ սկիզբն է ու վախճան մեր»:

Ամիրապետն՝
Սրտմութեամբ մը կատադի,
Ճարպն աչքին շուրջ,
Որսին Վըրայ յարձակելու
Պատրոստակամ զայլի նրման
Նայեցա իր առջն կեցող
Սուռերին այն,
Կարծես անմասն այս աշխարհէն:
«Բամտ տարէկ զիթք, շըդքայակապ»
Գոռաց յանհարձ,
«Որ ժաւէ հոն սնիրն իր գարշ»:

Այժմ բանտի խուցին նստած,
Պայազաւը Գողքնի բշուառ,
Կ'աղութէր լուռ:
«Սիրսոս ահա, Տէր բարեզուր,
Քու սիրովդ է լցուած ամրոց,
Ինչո՞ւ սակայն,
Մանր մընշեց ձեռքն այնքան
Գրլիսոս վըրայ իմ վայրահակ»:

Ընդումէ, Տէր, տրուոնքներս այս;
Երբեք արցումք բայց ոչ բռնք։
Անշաւշտ չափիդ հաւասարի
Ես չեմ կրնար,
Հատմ աւազից և ծռվն անհաւն
Զիրար կշռել ե՞րբ նե կրցեր.
Սակայն մարմիկ զիս կ'այպամեն
Ռու կը ծաղրեն ժեզի համար:
Առ քեւրէս քեռ մարմնիս,
Տէր իմ Յիշաւս,
Առաջմորդէ իմ խեղն եռզին
Վեր, գէպի վեր,
Առագաստին լուսակայան:
Ցոգմած եմ շատ,
Տուր աչքերուս
Ազատարար բութը մահաւան,
Մըշակ արդար
Ալգեստանին մեր եռզին,
Զի զիմն ենք բաւ աւրք արիւնին։

Ամիսներով պահեցին զիմն
Խորը բանսին։
Այժմ իր հազին բռչուն անրոյն,
Կարօնն ումեր հայրենի տան,
Որու մարմրուն երազին տակ
Երկու գէմէնք՝ արցումով լի,
Կը մընային անմընիքար։

«Թուր օրերս ու գիշերներս
Մէկ գայն ունին ինձի համար,
Ճակատագիրս ամէն կողմէն
Կ'զգամ գոյսուած»
Կը յարէր ան.
«Մահեր միայն կրնայ վերջ տալ
Օրերուն իմ այս տաճահար,
Ցայցէն յետոյ իբրև արև։»

Հրամանովն Ամիրային
Խոշուանգեցին զիմք չարաչար,
Տաք արցանով վրցուցին իր

Եղումզմերը մէկիկ, մէկիկ;
Փորին վլրայ տարածեցին
Մազ մազ մոխիր,
Եւ քամակի ակօսին մէջ
Մըլիրթեցին շամփուր կարմիր։
Կար կար կ'իյնար ոչ էն արցունք,
Սիրտն արիւմ,
Բայց շըրքներէն իր կդպուած
Ոչ մէկ հրծծիւմ։

Օրեր յետոյ եկաւ դահին,
Վիզին կապած
Կապոյս մանեակը մահարեր.
Սուրը ձեռքին՝
Կարմիր գօտին մէկ քլէն կախ։
Անոր դէռքէն ունաբորին
Իր կարէր բոյն,
Բիբերն օճի լեզուներու.
Նրման շարժուն,
Կը հեային անժուժելի։

*.

Իմկած էր ամ արիւնաբոր,
Մեծ ոստանի երապարակին։
Գուխն անշատ իր մարմինէն։
Ճակտին վըրայ դեռ կը շոգար
Փառքի հաւատոքին,
Իրքն շահ մը յաւերժական
Մուրերուն գէմ գերեզմանին։


Տարիներ վերջ,
Քնարահար մը անծանօք
Պիտի հիւսէր
Երգն յետադարձ թահատակին,
Իրար խառնած արցունք, ժըպիտ.
«Զարմանալի իմն կը բռի.
Քու ոգրերուդ իրջինն անուշ,
Ով նահատակ երանելի,
Սուրբը Վահան, իշխան Գողբնի։»

(Շար. 2 և վերջ)

Եղինակնոր

ՅՈՐԵԼԵԱՆՆԵՐ

Ն. ԱՄԵՆ. ՊԱՏՐԻԱՐք Ս. ՅՈՐ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ՔԱՐԱՍՈՒՆԳԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷԶ



1976 Մարտ 14-ի երեկոյեան, Ս. էջմիածնի Վեհարանի գեղակառոյց դահիճնին մէջ խունը բազմաւթեան մը ենթայութեան և անդիսաւորապէն նըշուեցաւ Ս. Արքունի Գահակալ Ն. Ամեն. Տ. Եղիշէ Ս. Արքեպոս. Տէրուերեանի գրական գործութեութեան բառասամենին գրամակը: Հանդիսութեան նախաձեռնուն ու նախազան էր Ազգին Հայրապետը՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա. Վեհափառ Կաքողիկոսը: Ներկայ էր Հայաստանի Կրօնից Նախարար Մեծ. Տիար Մարգին Գասպարեան:

Ցորելինական երեկոն բացաւ Արևմտեան եւրոպայի Հայոց Հայրապետական Նախարար Գերշ. Տ. Սերովիկ Արքեպոս. Մանուկեան. իսկ նզիվարդի գրական բեղմնաւոր վաստակիթ մասին գնահատանիքի շերմ խօսերով հանդէս եկաւ բանաստեղծուիկ Մարտ Մարգարեան: Իր ողջոյնի և գնահատանիքի արտայայտութիւնները բրաւ նաև Վեհափառ Հայրապետը:

Ապա Ամեն. Ցորելինար Սրբազնը շնորհակալութեան իր անկեղծ զգացումները յայտնեց բռնորդին:

Գործադրաւեցաւ գեղարքունուուկան նոխ յայտագիր մը, մեծ մասամբ նզիվարդի ստեղծագործութիւններին բաղկացած:

Ստարք կը հրատարակենք Գերշ. Տ. Սերովիկ Արքեպոս. Մանուկեանի բացման խօսքը և Մարտ Մարգարեանի գեղեցիկ նառը:

Ն. ԽՄԲ.

Վեհափառ Տէր,
Ամենապատիւ Սրբազն Եղայր,
Յարգելի Պարոն Գառպարեան,
Հոգիոր Եղայրակիցներ և
Յարգելի ներկաներ,

Ինձի համար քաղցր պարտականութենէ մը աւելի հաճոյք մըն է կատարել բացման խօսքը այս գրական երեկոյթին, նուիրուած՝ բանաստեղծ Եղիշարգին, որուն հետ կապուած եմ չուրզ յիսուն տարիներու բարեկամութեան, Եղայրակիցութեան և միւնոյն իտէալին՝ Աստուծոյ և Ազգին ծառայելու խանդապին զգացումներով:

Ճակատագիրը մեր պատմական հայրենիքն, չքնաղ Վասպուրականէն, տակաւին շատ մանուկ հասակի մէջ, Պաղտատի անապատները մեղ նե-

տեց, այնտեղ բախտակից ամբողջ սերունդի մը հետ, մեր ծնողներուն գուրդուրանքին զրկուած, մատներով աւազներուն վրայ Մեսրոպեան այրութէնը սորվեցանք, և կիզիչ աւազներու վրայ ծալապատիկ նստած՝ մեր համեստ դաստիարակներու հմայիչ խօսքերու ազդեցութեան տակ մեր պատմութեան հերուներէն ներշնչուեցանք, և մեր անցեալի արժէքներուն ծանօթացանք, մեր մանուկ հոգիները սարսուռով լեցուցին 1915ի Մեծ Եղեռնի անմարդկային արարքները, զորս մեր մարմոյն ու հոգւոյն վրայ կը զգայինք արդէն, և այս բոլորը անջնջերի մնացին մեր մտքին ու ամբողջ հութեան մէջ:

Տարիներ ետք, Հայկական Բարեկործական Ընդհանուր Միութեան անունին տակ գործող բարեսիրա հայեր և բարերար ձեռքեր հայրական հոգածութեամբ, անապատներէն մեզ Երուսաղէմ փոխազբեցին, և մենք երկուքս, տասնեակ մը ուրիշ ընկերակիցներու հետ Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի հոգեկոր ճեմարանը՝ Ժառանգաւորաց վարժարանը ընդունուեցանք շարունակելու համար անապատի աւազներուն վրայ սկսած մեր ծանօթութիւնները, և հաղորդուելու մեր ազգային մշակոյթին և անոր անպարտելի ոգիին:

Եւ Երուսաղէմի Հայոց վանքի գարաւոր կամարներուն տակ, ուր միշտ կը զգացուի ներշնչող ներկայութիւնը մեր տատուածարեալ հայրապետաներու անոսասն հաւատքին և անմեռ յոյսին՝ սրբազն վայրերու իորհրդաւոր մըթնոլորտին մէջ, ուր միշտ կը լուսին Թրիստոսի ձայնին արձագանքները, և ուր կը կարծիս քալել անոր ոտքերու հետքերուն վրային, և ուր միշտ կը հնչէ անոր սստուածային սիրոյ պատզամը, այդտեղ անեցանք, և այդտեղ զարբնուեցան մեր միտքն ու հոգին՝ մեր ժամանակներու մէծ դաստիարակ և բանաստեղծ, մէծ Պատրիարք Դուրեհանի և իր հոգեծին ու արժանաւոր յաջորդ Թորդու Պատրիարք Գուշակեանի ներշնչող չունչին ներքեւ:

Մեր ամբողջ ուսանողութեան շրջանին պէտք է յիշել որ Եղիվարդը Դուրեհան Պատրիարքի և բոլոր ուսուցիչներու ուշագրութիւնը գրաւած էր իր բացառիկ ուշիմութեամբ ու մանաւանդ գրելու չորհներով:

Եղիվարդ կամ Եղիշէ Վարդապետ այդ միջնորդտին մէջ և այդ ոգիով մէծցաւ, մինչ իր միւս ընկերները մեր Եկեղեցւոյ ծառայութեան կոչումով ցրուեցան աշխարհի չորս անկիւնները գոհացում տալու համար մեր ժողովուրդի եկեղեցական ու ազգային կարիքներուն, ինքը միշտ Երուսաղէմ մնաց, եղաւ ուսուցիչ, վարժարանի տնօրին, լուսարարապետ, հասաւ մինչեւ վանքի պաշտօններուն բարձրագոյնին, բայց միշտ մնաց բանաստեղծ, իր պաշտօններուն մէջ դնելով միշտ բանաստեղծի իր չունչն ու ոգին, ու այսօր ալ Երուսաղէմի պատրիարքական Աթոռին վրայ կը մնայ տակաւին գերազանցապէս բանաստեղծ պատրիարքը:

Այսօր, այս հանդիսաւոր պահուն, ես պիտի շանդրագառնամ իր Եկեղեցական կեանքին, որ այլապէս բեղուն և յատկանչական է, մանաւանդ Երուսաղէմի պէտ միջազգային սրբավայրերու և զանազան ժողովուրդներու հետաքրքրութեան առարկայ քաղաքի մը մէջ: Միայն կ'արժէ շեշտել թէ այդ պաշտօններուն մէջ իսկ հոր Եղիշնակութիւն մըն է, նախանձախնդիր՝ մեր Եկեղեցւոյ և ժողովուրդի բարոյական և հոգեկոր արժէքներուն. թերենս օր մը, համազային տարողութեամբ նշուի ո՛չ միայն իր գրական ու բանաստեղծական գործունէութիւնը, այլ համազային տարողութեամբ կատարուի յորելինական տօնակատարութիւնը իր Եկեղեցական ու ազգային ծառայութեանց քառասնամեակին, որ եղած է նոյնչափ բեղուն և օգտաշատ. ծառայութիւններ՝ որոնց սիրովը տուշորեցաւ, ապրեցաւ ու ներշնչուեցաւ, գործեց, և սքանչելի

քերթուածներ հիւսեց անոր փառքին, յաղթանակներուն և անոր ճակատագրին համար:

Այսօր, այս գրական հաւաքոյթը նուիրուած է միմիայն իր քերթողական արուեստին, այլ կ'ուզեմ միայն շեշտել թէ Եղիվարդ, Եղիչէ Արք. Տէրտէրեան, արժանաւոր Պատրիարքը Հայ Երուսաղէմի Առաքելական Աթոռին, մեր եկեղեցական հասարակական կեանքին մէջ հզօր անձնաւորութիւն մըն է՝ ուժեղ անհատականութեամբ, որ իր կեանքին գինովն իսկ պատրաստ է պաշտպանելու մեր ազգային և եկեղեցական բոլոր սրբութիւնները:

Հակառակ նոյնիսկ, եթէ ինձի կը ներէք այս բացատրութիւնը, իր ընթացիկ արտայայտութեանց և երեսյթին, ոսկի սիրո մը և մանուկի հոգի մը ունի, պարզ, վճիռ, խորապէս մարդկային և քրիստոնէական, անյիշայար է ու ներող, և լայնախոն՝ բոլոր մարդոց նկատմամբ, նոյնիսկ իր անձնական հակառակորդներուն, որոնք չուտով, չատ չուտով կը մոռնայ, այլ անողոք է բոլոր անոնց նկատմամբ, որոնք որևէ ձեռվ կը փորձն վիրաւորել մեր ժողովուրդին ազգային զզացումները և արժէքները, վտանգել մեր Եկեղեցին, և անոր սրբութիւնները, ու աղարծել անոր վարդապետութիւնը:

Ահա, այսպիսի անձնաւորութիւն մըն է, որուն վրական և բանաստեղծական քառասուն տարիներու վաստակն է, որ կը ներկայացուի այսօր, իր սէրրին ու նախանձախնդրութիւնը մեր ազգին և եկեղեցին նկատմամբ՝ գրական ու բանաստեղծական արուեստով արտայայտուած: Իր բոլոր գործերը, ըլլան անոնք արձակ և մանաւանդ բանաստեղծութիւն, ներշնչուած են ազգային կը-րօնական ողիէն, սուրբ գրական դէմքեր, ազգային հերոսներ՝ մեղրամումէ Մագդաղինէն սկսեալ մինչև լայնաշունչ և հզօր գիւցազներզութիւնը Կարմիր Զօրագարին: Եթէ Սփիւռքի մէջ Եղիվարդ ծանօթ է իր բանաստեղծական բոլոր արժանիքներով և ստեղծագործութիւններով, զժքախտաբար Մայր Հայրենիքին մէջ նուազ ծանօթ են իր գրականութիւնը և բանաստեղծական գործերը առ հասարակ: Այս խօսքերը, յարգանքի և գնահատանքի տուրքէ մը աւելի, մաղթանք մըն են իրեն, որ շարունակէ կրօնական-ազգային և հայրենասիրական իր բեղուն գործը, հիւսնալի անակնկալներու շարքով մը և նոր ստեղծագործութիւններով:

Բացուած կը յայտարարենք այս երեկոյթը, մասնագէտներուն ճգելով Եղիվարդի բանաստեղծութեան ներկայացումն ու վերլուծումը:

ՍԵՐՈՎԲԵԿ ԱՐՔԵՊՈ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՆՈՐԻՑ ՄԻ ՊԱՅԺԱՌ ԶՈՐԱԿԻՈՐ ԳՐԻՉ

Սկսած Վիշապաքաղ Վահագնի հրեղէն ծնունդից, համակուած ոսկեմայր Անահիաի ծովացող բարութեամբ, գեղեցիկ Արայի անբեկանելի հաւատարձութեամբ, ճառագայթել են Հայոց արուեստի լուսեղէն ակունքները:

Շարուել են մեր բանաստեղծութեան ոսկէ տողերը, մեր վաղ գպութեան անաղարտ մարզարիտները:

Դեռևս հնագոյն գարերի խորքից կայծակել են մեր առասպելներն ու չին վէպերի բեկորները վառ: Եւ մեր առաջին գրիչները հաւաքել են ողջը, արւել դարերին:

Ու մեր փոքր ու մեծ սրբավայրերի լուս խորախորհուրդ գմբէթների տակ, մեր խւատասի տաճարների քիւ ու կամարների հովանու ներքոյ, դաշորուել են մեր ժագաղաթները, մեր ժանրանկարչութեան սքանչելիքները: Նուագներ են դարձել մեր հոգու մրմունները, ապառաժների կարծր կողերին քանդակուել են մեր ճամբար չղտած սէրերն ու երազանքները:

Զքնաղ գոյներ ու ձևեր են ստացել մեր յուղումներն ու տաղնապները, և դարերի ամայութեան մէջ շարուել են մեր պատմութեան երկաթագիր հատորները՝ որպէս անկրկնելի հարսաւութիւն ողջ մարդկութեան համար:

Եւ այս ամէնը մեր հոգեւոր հայերերի գերմարդկային նուիրումով, մեր ծանրագոյն օրերին անգամ՝ ապագայի հանդէպ ունեցած մեր հաւատով ու եամբով, ոգու ամրութեամբ ու օրտի լոյսով. բոլոր չափերից, սահմաններից վեր անձնութիւնթեամբ:

Տեսնում ես ասես ցուրտ մենարանների մոմերի տակ նստած, յայտնի և անյայտ մեր հանճարներին, խոնարհ ու գունատ դէմքերը հակած ժագաղաթներին՝ նկարում են ու նաղաշում լուսէ ծաղիկներ, դէմքեր սրտառուչ, քիւեր ու կամար և նախչուն գրեր ու սէրեր փակուած, երազներ չքեզ և այսպէս ան-

իրգեր են ձօնել, կերպարներ ձուլել, ասք ու առասպել, իմաստութիւններ. աստղեր են նետել ու ծիածաններ իրենց խաւարից՝ հոգիների մէջ, լուսապատկերը մեծ զալիքների:

Պահերու համար ինքնութեան ոգին, պատկերը ցեղի և կամքը ամուր միշտ անհաւասար կոփների մէջ, անվերջ կեղեցուղ մեր ժողովրդի:

Եւ զերմարդկային ուժով անկոտրում ու անմեկնելի, նըանք գառեցին փարոսներ չքեղ մեր արուեստների, գիր ու զպօռութեան:

Եւ այսպէս ոգու ջահերը պահած գլուխներից վեր, անցել են նրանք խորիոր զարերի խաւարի միջով, աշերով կործան, արհաւերքներով և հասցըրել են մեր խոսքը բարի կատարելութեան, մեր երգը ոգու ներդաշնակութեան, մեր անունները՝ հանուր մարդկութեան ստեղծած անհաս լոյս կատարներին:

Մաշտոց, Խորենացի, Եղիշէ, Եղիշէ, Նարեկացի, Շնորհալի, Քուչակ, Թորոս Թոսլին, Ֆրիկ, Սայաթ Նովա, Միթթար Աբրա, Աւոնդ Ալիշան, Խրիմեան Հայրիկ, Կոմիտաս. . .

Եւ այսպէս զալով ոսկեմշուշ հեռուներից, Միջնադարի խաւարների

ժիջով, զահերի նման վեր պահած հզօր անունները մեր, որոնք սգեղին փահան-ներ զարձան բռլոր պիզդ ու նենգ սոսիների դէմ, որոնք պահել են հաւատը խո-րունկ, միտքը մշակել, խոսվել հոգին յորդացութերով մեծ ու լուսեղին, կայ-ծակութերով չքեղ ու բարի և ստեղծել են համամարդկային գլուխորժոցներ, որպէս ինքնութեան ու ոգու ուժի մեծ հանճարածին վկոյադիրներ:

Եւ մենք որքա՞ն ենք պարտական հիմա լոյսի ու լաւի մեծ յաղթանա-կին:

Անցել գնացել, փոշի են դարձել բռլոր տեսակի կործանողները պիզդ ու չարանենդ: Մեր թերի նման մնացել են նրանց սև անունները մազազաթների սոկէ էջերին և մեր արուեստի պանչելիքները: Մեր երազները կեանք առած արդէն:

Եւ մինչեւ այսօր սրբութեամբ գործող իմաստութիւնը մեր գրիչների: Եւ մինչեւ հիմա երբեք չընդհատուող մեր սոկեղթան:

Եւ, այդ լուսաւոր չին անունների մեծագոյն մասը կապիւած է եղել պատմական անխոնջ ազգապահապան այս մեծ կենտրոնի, այս խոր հնաւանդ որբագյրի հետ, որի անթափանց կուռ պատերի մէջ ապաստանել են ու ողե-պիգուել մեր մշակոյթի պատմութեան ընտրանիները:

* * *

Երուսաղէմի Հայոց Պատրիարք Եղիշէ Տէրտէրեանը, բանաստեղծ Ե-ղիկարդը՝ իր կոչումով, իր ճակատագրով, իր ամբողջ կեանքով ու աշխատան-քով անմիջական շառաւելոն է իր նախորդների, նրանց մեծ գործի շարունակո-դը, այնքան բարդ իրադրութեան մէջ, այնքան դժուարահամ սիիւռքահայ աշ-խարհում:

Նրա ողջ կեանքի մեծ մտահոգութիւնը ջլատուած ուժերով, փշուր-փշուր, աշխարհով մէկ ցրուած, անկայան, անապաւէն, անյոյս, անհեռունկար սիիւռքահայ իրադրութիւնն է, օտարակուլ ովկէանուններում հայածին տա-ղանիների կայծելլու առողութելու ցաւը, հնարաւորը փրկելու, անհնարինը իրականացնելու մշտական հոգսը այրուել է շարունակ նրա հայրենասէր հո-գում, նրա հնարամիտ, ամէնուրեք օգնող ու հասնող նրա գործարար կեան-քում, խորունկ դաւանանք, կամք ու ուժ է դարձել և տաք սնունդ է տուել նրա զրական զօրաւոր տաղանդին:

Մի տեղ անհուն սէրն ու կարօտն է մարդուն բանաստեղծ դարձնում, մի տեղ՝ խորունկ ցաւի կոկիծը, մի տեղ՝ կուռելու, յաղթելու անբեկանելի կամքը, մի այլ տեղ՝ անզտնելի կորուստները դտնելու, անհատուցելին հատու-ցելու ամրող կեանքը համակած մշտական ծարաւը:

Եւ այսպէս իր բարդ ճակատագրով, մարմանդ ու յախուռն այրութե-րի մէջ, իր բարդ ու գիւռարին կեանքով ստեղծել է Եղիկարդը մի սրտայորդ ու հարուսա գրականութիւն, ստեղծել է հայրենաշունչ ու հայրենապինդ գոր-ծերի մի գունագեղ շարան, մի թանկ հարստութիւն:

Հինգվեց տարեկանից անցած Եղիսոնի արհաւիրքներով, զրկուած ծը-նողներից, բոլոր թանկ հարազաններից, ծանր կորուստների մշտական կոկիծը մատղաւ սրտի մէջ, նետուել է նա որբանոցից-որբանոց: Մեծացել, ամրացել է օտար ափերի անկայուն մթնոլորտում: Դիմացել է յարափոփոխ եղանակնե-րին:

Հասկանալի է, թէ որքա՞ն ցաւ ու կսկիծ է հոսել նրա տոկուն զարկե-րակներով, որքա՞ն վիշտ ու դառնութիւն է կուտակուել նրա ամուր հոգում:

Եւ իր նախահայրերի նման, նա իր գորեղ զբիչն է հանել ժարտի դաշտ՝ օդնելու իր վատանդի ժողովրդին, լինել-չլինելու նրա ծանր ու տեսական պայցարի մէջ, ի խնդիր աշխարհի ամենազօր ճշմարտութեան, ամենամեծ զգացումին, ի խնդիր ժարդկային բոլոր սէրերի ու զեղեցկութեան:

Յորդել է կեսանքը ծանրակուհակ ալիքներով և Հայոց պարմանալի ճակատադիրը բոլոր զանոնութիւնների ու զժուարութիւնների հետ միասին առւել է նրան մեծ ժառանգութիւն: Հողեկան ուժերի խորունկ ակունքներ, ազդային մշակոյթի սիրառաւա սնունդ, առւել է բախտաւոր հանդիպումներ, ընտիր ուսուցիչներ ու բարեկամներ:

Վազ երիտասարդութիւնից նրա կեանքի ուզեկիցներն են դարձել մեր մշակոյթի նշանաւոր դէմքերից՝ բանասահղ Պատրիարք Եղիշէ Դուռեւանը, Պատրիարք Թորդոս Գուշակեանը:

Նրա գրական զեղարուհաւական ըմբոնութենքի, ճաշակի հասունացման, բիւրեղացման հարցերում մեծ զեր են կատարել յայտնի մատուրականներ՝ մանկավարք արուեստարան Շահան Գէրպէրեանը, վիխասան գրականագէտ Յակով Օշականը, որոնց հետ բանուածեղը կապուած է եղել բացառիկ բարեկամութեամբ, անձնական մտերժութեամբ:

Աշխարհոյ մէկ սփոռուած իր վատարանդի ժողովրդի ժշտական ցաւերն ու խորունկ խնդիրները առւել են նրան ընկալող տաք սիրու զան ու զժուար կեանքը առւել է նրան արթուն թափանցող միտք ու տոկունութիւն. մեծ կորուսների ծանր կսկիծը առւել է նրան անզիջող ողի. մեր ամբողջ պատմութիւնը առւել է նրան խմասուն զանքը ու փորձառութիւն: Եւ այս ամէնով ամրացած, բանասեղդ զործիչը իր ամենօրեայ հոգսերի հետ միասին գործի է զրի իր գորաւոր գրիչը, ստեղծելով բաւական հարուստ մի գրականութիւն, որի հիմնական մտափը ժարդու հաւատն է ու ոզու մեծութիւնը:

Քառասանկան թուականներից սկսած նա հրատարակել է յաշորդարար «Մագդաղինէն Մեղրամոնէ», «Խորտակման Գիշերներ», «Անցորդը», «Երան վրային երաններ», «Սուրբ Մեկրոպ», «Օտարականը», «Հեթանոսաց Առաքելալը», «Ընտիր Էջեր», վերջինն հարուստած նոր պոկմներով և նոր խոհական ուժեղ բանաստեղծութիւններով:

1975 թուին Եղիշարզը հրատարակեց «Կարմիր Զօրավար» ծաւալուն հատորը, նույրուած, իր խօսքով ասած, Հայոց պատմութեան «Հերոսների մեծ հերոսն»՝ Վարդան Մամիկոնեանին:

Այս ամէնին հետ միասին, հրատարակել է բազմաթիւ դրական, բարի յագիտական, հրատարակահասական յօդուածներ՝ «Սիրոն» և «Էջմիածին» ամսագրերի մէջ և սիրիւքահայ ժամուլի էջերում:

* * *

Իր ստեղծագործութիւնների մեծ մասի նիւթը նա ընտրում է Հայոց պատմութեան հնագոյն էջերից և Սուրբ Գրքի դիմաւոր գրուաղներից, տալով իր հերոսներին և գործող անձանց մօս ժամանակների ժարդկանց կեանքն ու ողին, մէջտեղ դնելով իրեն յուղող այսօրուայ հարցերն ու խնդիրները: Սա զբական ընդունուած մերից է, սակայն Եղիշնակը օգտագործում է այն իր բարազմունքին ու իր կեանքին բնորոշ զծերով:

Եղիշարզի ներկայացրած դէմքերից շատերը՝ Մագդաղինէն «Մեղրամոնէ», Սամարուհին, Սալոմէն և առանձնապէս Օտարականը՝ «Ասածու որդու» կերպարը, տասնեակ գարերի ընթացքում մշակուել են ժողովուրդների

ՃԵԾԱԳՈՒՅՆ Հանճարների կողմից, տեղել են վերածնութեան հրաշագործ ժամանակներով, զարձել են անմասն կտաւների, մեծ քանզակների և բազմազան երկերի նիւթի: Եւ հաւանարար իւրաքանչիւր հեղինակ իր հոգու ցաւերն ու ցույանքներն է աշխատել զնել այդ երկարակեաց կերպարների մէջ:

«Ամէն դար կը փորձէ ի՞ր ձեռով ապրեցնել այդ խորհուրդը, գրելով զայն երկնքի լոյսով, բայց իր արիւնով», գրել է Եղիշարդը իր նախարանի մէջ:

Բիրլիական այս թեմաները բանաստեղծը մշակել է մեսրովեան հարուստ ու յստակ լեզուով, կենդանի պատկերներով, ատք-տաք թրթոռուն ու յեցուն կեանքով, իր մեսրովեան ընթերցողի համար: Իր մտքի պայծառութիւնը, իր ոճի թարմ ու հիւթեղ պարզութիւնը, իր պատկերաւոր լեզուի բնական ու բուի հնարանքները թարմութիւն են տալիս գործերին, որոնց մէջ կուտակուած են մարդկային բոլոր ժամանակների մտորումներն ու փիլիսոփայութիւնը, ով իմանայ՝ մշակուած ի՞նչ հանճարների ձեռքով:

Եւ մեր բանաստեղծը ներկայացնում է այնպէս, որ մեզանից շատ հեռու այդ կերպարները ընկալում են ու հասկանալի դառնում այսօրուայ ընթերցողին:

Վերցնելով հեռաւոր անցեալի թհմաները, բանաստեղծը իր արուեստով տալիս է այսօրուայ գոյն ու երանգ, բնական մարդկային մտորումներ, յաւեր ու խնդիրներ, ժամանակի չնշառութիւն, միանդամայն պահելով սրբազն վեհութիւնը, դրանով իսկ ցոյց տալով իր նախընտրած թեմաների խորր մարդկայնութիւնը:

«ՄԱԳԴԱՂԻՆԵՆ ՄԵՂՐԱՄՈՒՄԵ»

Հետաքրքիր է, որ մեծայարդ բանաստեղծը իր գրտկան կեանքը սկսել է իր ստեղծագործութեան զլուկագործոցով՝ «Մագդաղինէն Մեղրամումէ» գեղեցիկ պուշտով: Անկախ անուններից և նախակունքներից, սա կեանքով լեցուն մի սիրավիպ է, զրուած վարպետ ձեռքով, անջնջելի պատկերներով, հողերանական նրբութիւններով, համակող ու հաղորդական, մարդկայնօրէն տաք, պարզ ու խորունք արտայայտութիւններով:

Դժուար է պատկերացնել աւելի կենդանի, թրթոռուն ու սիրաշաղախ արարած, որքան այս գրքի բիրլիական հերոսուէին: Լեզենդի բուն հութիւնը լինելով խորը մարդկային, բարձր արուեստով մշակումը տուել է մի շատ զեղցիկ գործ:

Առաջին իսկ էջերին, վրձնի մի քանի հարուածով, հեղինակը նկարում է զազազած ու բիրտ ամբոխի տխմար ու վայրագ պատկերը, որն ուզում է քարկուծել Մագդաղինէին:

Հալածական, անպաշտան,

Վոհմակիմ դէմ արիւնուշտ,

Ան եղնիկի մէկը նըման:

• • •

Ամրոխին դէմ արիւնուշտ,

Որ բարերով կը պատահար . . . :

• • •

Թիսուս անոնց նայեցաւ.

Ու ծըպտեցաւ տըրտմօրէն . . . :

Ցըգոյն դէմքն իր զեղցիկ,

Մազաղարի մ'կըբէն
Կարծես թէ վեր առնուած,
Դիտեց զանանք լնդերկար,
Անդրաշխարիկ մը անհան.
— Ձեզմէ անմեղն էն առաջ
Նետէ բռդ քարժ այս կընոց :

• • •
Սառսուա մ'անցաւ ամբոխէն .

• • •
Քարերն հատ հատ ինկան վար :

Եւ սկսում է մի անահան խորունկ սէր, Հոգեկան աչխարհի մի փր-
յուղում ու վերածնունդ, մի կատարեալ յեղաշրջում, ոչ թէ հրաշքների դորո-
թեամբ, այլ մեծ ու խորունկ սիրոյ լուսարձակումով, մարդկային վեհութեան
ճառագայթումով, Հոգու խորքերի ամենաթանկի արթիացումով :

Կիթը անձայն կարտասուէր. . .

• • •
Կուզէր անոր ոսթերուն
Առջևն իյնալ ու երծել .
Դիո ոչ ոչի չառքերած
Բառը, անդունդ իր սէրէն,
Զոր մէկ անզամ կ'րսէ մարդ:
Բայց տրկար իր իր հոգին
Նման ամբն քիրենի :

Այս ամէն նրբութեան ու խորութեան հասնելու և հասցնելու համար
մեծապէս օգնում են բանաստեղծի լեզուական նորոյ ու յատակ մտածողութիւ-
նը, պարզ պատկերներն ու ճիշդ ընտրուած յակոնիկ խօսքը :

Ինչպէս Վերածնութեան խոշորագոյն նկարիչնելը Աստուածամայրը
նկարելիս նկատի էին ունինում կենդանի, պարզ, երբեմն զեղջուկ աղջիկների,
այնպէս էլ այս աստուածանչեան կերպարը կենդանի կին է, ջերմ, յուզաթա-
թու, համակուած ամենամարդկային սիրով : Հեղինակը նկարագրել է այնպէս,
որ դպում ես երիտասարդ կնոջ տաք չնշառութիւնը, սրտի զարկերն ու դէմքի
չիկնանքը :

Լայն են բացուեր դրմերն անոր
Խեղն եղիին՝

Բաներու որ տնում չումին :

• • •

— Դարձա՛ր իմծի,
Դա՛մ՝ գեղանի Աստուածորդի .
Ա՛ն, զիտէի թէ դամբանէն
Թէ դըմոխէն ու երկըթէն
Աւը կարող է ես բերել
Իր տեմշալին :
Եկո՞ւր իմծի . . . :

Աս ներումք կախարդանքն է, մեծ Հոգու և մեծ սիրոյ արարիչ, լու-
սաւոր ճանապարհը :

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐԵԱՆ

(Շար. 1)

ԶԵՐՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԿՈՒՍԱԿՐՈՆ ԱԲԵՂԱՅԻ

Շարաթ, 12 Յունի 1976, կեսօրէ ետք, Երուսաղէմի Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ պաշտուած Հոգեգալյատեան Հանդիսաւոր նախատօնակին ետք, հանդիսավետ Գերջ. Տ. Շահէ Արքազ. Ամէմեան կատարեց քահանայական կոյժան արարողութիւնը Ս. Աթոռոյ Ընծայարանի Ամերիկահայ ուսանող Բարձ. Պարոյր Սրբ. Մելգոնեանի, Խարտավիլակն էր Հոգէ. Տ. Կիւրեղ Շ. Վրդ. Գարիիեան, իոկ աւրոնթերականներն էին Հոգէ. Տ. Գևորգ Արդ. Տաւուլարեան և Հոգէ. Տ. Ասպետ Արդ. Պայեան: Արարողութեան աւարտին, ուխտադիր արտասանեց Հայաստանեայց Ս. Եկեղեցի Դաւանանքը, Ս. Գրիգոր Տաթևացէն սահմանուած:

Կիրակի, 13 Յունի 1976, Հոգեգալյատեան տօնին օրը, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի Վերատեսուչ Գերջ. Տ. Շահէ Արքանու. Ամէմեան, քարոզեց՝ բնարան ունենալով Մատթէոսի Աւետարանին Քարէ՞ք բմակէ զրաժակն զոր ըմպէլոց եմ՝ Քրիստոսի Հարցումք, ուղղուած Զերւինան Եղայրիներուն, և կատարեց Պարոյր Սրբ. Մելգոնեանի քահանայական օծումն ու ձեռնադրութիւնը: Օրուան Հանդիսավետն էր Ամենապատիւ Պատրիարք Ա. Հայրը:

Նորրնծան առաջնորդուեցաւ Ս. Խորանին առջին, ապա առքնթերակայ Հոգեինորհ Հայրերուն առաջնորդութեամբ և ծնրադիր՝ ան բարձրացաւ Խորան, ուր, զառնալով ժողովուրդին, աշխարհէն և աշխարհիկ կեանքին հրաժարեցաւ:

«Ողջոյն»էն առաջ, նորրնծան ծնրադրեց ձեռնադրիչ Գերջ. Սրբազնին առջն, և բնորունեց սի փիլոնը, սաղաւարոր, փորսւրարը, չուրջառը; Ապա, մինչ դպիիներ «Խորհուրդ խորին»ը կ'երգէին, նորրնծան դոց վարագոյնին ետև զգեստաւորուեցաւ:

Պատարագիչ Սրբազնը Ս. Միւռոնով օծեց նորրնծայի ճակատն ու ձեռքը, և զայն վերակուցեց Տ. Հայկազուն Արքազայ: Քիչ ետք, ան իր հոգեւոր հօրէն ստացաւ Սուրբ Ակիհը, որ խորհրդանիչն է Ս. Պատարագ մատուցանելու իշխանութեան, և ժողովուրդին զառնալով տուաւ իր առաջին օրհնութիւնը:

«Ողջոյն»ի պահուն Պատարագիչ Ս. Հայրը, ինչպէս նաև Ս. Յակոբեանդ Միաբանութեան անդամները սղագուըրուեցան նորրնծայ Տ. Հայկազուն Արքազային հետ:

Ս. Պատարագի մերջաւորութեան, մինչ նորրնծան զասին մէջ կեցած Աւետարանին յոււ բնթերցում կ'ընէր, հաւատացեաններ աֆահամբոյր կատարեցին:

Իսկ նոյն օրը, երեկոյեան ժամերգութեան աւարտումէն ետք, ձեռնատրիչ Սրբազն Հայրը, յետ աղօթքներու և Ս. Գրոց բնթերցումներու, նորրնծային գլուխէն վերցուց սարկաւագական գդակը, զայն փոխարինելով վեզարով:

Իրիկունը, Վանքի սեղանատան մէջ արուած Միաբանական ընթրիքին նախագահէց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, իր շուրջ ունենալով Միաբանութեան անդամներն ու Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի ուսանողութիւնը:

Ընթրիքի բնթացքին խօսք առաւ նորրնծայ Հոգէ. Տ. Հայկազուն Արդ. Մելգոնեան, և ըստ ի միջի այլոց.

«Հակառակ Ամերիկահայ գաղութիւն հրաժայական կարիքներուն և նոր սերունդի դաստիարակման հսկայական պահանջներուն, որոշած եմ և ամբողջ Միաբանութեան առջև կ'ուժաեմ մասլ այս Սուբբ Աթոռի կամարներուն ներքին, և որքան որ կարողութիւնս կը ներէ՛ նուիրուել անոր բարզաւաճումին։ Այս քայլով կ'ուզեմ չեշտել Ամերիկահայ Հասարակութեան՝ Հայ Երուսաղէմի պատմական կարերու թիւնը և անոր մեծ զերը։ Սփիւռքահայութիւնը շատ բան կը պարտի Երուսաղէմի։ Հոս դաստիարակուած Հովեորականներն են որ այսօր կը վարեն Հայ զաղութեանը, բայց սփիւռքը բաւարար չափով չի զիտակցիր Երուսաղէմի հանդէպ իր պարտքին։ Ես կը իսուսանամ ըլլալ այդ կամուրջը դրացնողներէն մին»։

Վերջաւորութեան, խօսք առաւ Ամեն։ Գատրիարք Ս. Հայրը, որ յորդորական իր ինքանները տալէ ետք չնորհաւորից Հ. Հայկազուն Արեղան, ապա օրհնեց սեղան։

Ապա նորընծայ Տ. Հայկազուն Արեղան իր վարժիչին՝ Հողչ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուտարեանին կողմէ առաջնորդուցաւ Ս. Հրեշտակապետաց մանիք, Հոն անցրնելու համար քառանօրեայ առանձնութեան և ազօթքի շրջանը։

* * *

«ՍԻՌՆ», այս առիբով ջերմագինս կը շնորհաւորէ Տ. Հայկազուն Արեղան, անոր ցանկալով յաջողութիւն իր ուուրք ասպարէզին մէջ։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻՒԾԵՐ

Հողչ. Հայկազուն Արդ. Մելքոնեան ծնած է 1949ին Տիթրոյթ (Միացւալ Նահանգներ), որդին Տէր և Տէն։ Պարոյր Մելքոնեանի։

Նախնական և երկրորդական կրթութիւնը ծննդավայրին մէջ ստանալէ ետք, ընդունուած է համալիսարան և 1972ին Wayne State University-էն ստացած Պականոր Արուեստից տիտղոսը Աշխարհագրութեան և Պատմութեան հիւղերէն։ Իսկ 1974ին ստացած է Մագիստրոսի տիտղոսը ուսուցչութեան մէջ, իր մասնակիութիւնը ըլլալով Խորհրդատուութիւն (Counselling) և Լեզուարանութիւն։

Հողչ. Տ. Հայկազուն Արեղան, Տիթրոյթի ազգային-եկեղեցական կեանքին մասնակցած է պատանութենէն։ Մօռաւորապէս ութ տարի ուսուցիչ եղած է Տիթրոյթի Կիրակնօրեայ վարժարանին, նաև չորս տարի՝ նոյն քաղաքի հայկական դպրոցին։ Տասնյորս տարի պաշտօնավարած է A.C.Y.O.A.-ի տեղական վարչութեան մէջ, երեմն իրեւ առենապետ։ Նմանապէս անդամակցած է նոյն կազմակերպութեան Կեդրոնական Վարչութեան։

1969-1970 եղած է Ս. Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանի ուսանող։

1974ի աշնան եկած է Երուսաղէմ և ընդունուած ֆառանգաւորաց Վարժարան և Ընծայարան որպէս յատուկ ուսանող, մասնագիտանու Հայագիտական նիւթերու մէջ։ Երկու տարիէ ի վեր Հոն կը պաշտօնավարէ իբրև ուսուցիչ աշխարհագրութեան և անդիբէն խօսակցութեան։ Վերջին շրջանին պատրաստած է աշխարհագրութեան երկեղութեան դասագիրք մը, ինչպէս նաև Ամերիկահայ եկեղեցիներու մէջ մոմակալներու դրժանութեան համար մը, դարձեալ երկեղութեան։

ՊԱՏՄԱԿԱՆ

ՈՒՐՈՒԱԳԺԵՐ ՀԱՅՈՑ ՎԱՆՔԵՐԻՆ ԿԻՑ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ



Մինոյն դարում Արշարունեաց Կամբջաձորի վանքում պատմութիւնը արձանագրում է 300 կրօնաւորների գոյութիւնը, նրա առաջնորդը՝ Սամուչէ Կամբջաձորեցին, մականուանեալ Խմաստակ, վարժ էր Ս. Գրքի գիտութեանը, տոմարադիտութեանը և երածշուութեանը։ Մատթէոս Ռւուայեցին պատմում է, որ Ժ դարում, երբ մի տոմարական վէճ ծագեց Յոյն վարդապետների մէջ, Բիւզանդական կայսրը հրամայում է Սամուչէին կանչել յինարանութեան։ Յունաց բոլոր գիտունները «շարժեցին ի վերայ Սամուչէի զամենայն զրեանս տանն Յունաց և ոչ կարեցին շարժել զնա ի ճշմարտութեանց անտի»։ Նոյն վանքում Ժիկ դարում ծաղկեց Դէկոր Ռւուացի Հարիւրամեայ ծերունի ատենախօսը, որին անուանում է պատմիչը «աղբիւր մշտնջենաբուխ վտակաց և լեզու հրեցին հրովար ներկեալ»։ Շիրակի Հոռոմոսի վանքը ևս ունեցաւ իր գիտնական վարդապետները, որոնցից մէկին՝ Յովհաննէսին յիշում է Ասողիկը։ Այդ վանքին ունէր հարուստ մատենադարան։ Սանահինում ևս կար մի մեծ գրատուն, ուր ժողովուել էին, ինչպէս պատմում է Կիրակոս Գանձակեցին, շատ դիտնական և ուսումնամասէր մարդիկ, որոնցից մէկն էր Անանիա Սանահինցին, այր մտաւոր և հանճարեղ, զիտող տոմարական արհեստի և աստուածային գրոց մէկնող։ Սանահինից ոչ պակաս երեկի էր զիտուններով և լուսաւորութեամբ Հաղբատի վանքը, որտեղ Ժ դարում եղել է մինչև 500 կրօնաւոր. այնտեղի մատենադարանը, որ պատմիչները անուանում են «ամենափարթամ զանձարան», մասամբ տեղաւորուել էր այրերի մէջ։ Կրօնաւորներն այնքան յափշտակուում էին այդ զանձարանի ուսումնամասիրութեամբ, որ մինչև անդամ օրերոյ մոռանում էին իրենց առանց այն էլ սակաւապէտ կերակուրը։ Այդ քարանձաւների զրատունները նիւթ տուին Ժիկ գոյութերում Յովհաննէս Սարկաւագ վարդապետին կազմելու իր սարկաւագադիր տոմարը։ Կիրակոս Գանձակեցին սրա ուսումնամասիրութեան բազմաթիւ աշխատութիւնները թուելով, նորագիւտ տոմարի մասին այսպէս է խօսում։ «Սա զրագմաց վափագելի և ոչ ձեռնահասս հաստատ և զանշարժ տոմարն կարգեաց Հայոց փոխանակ շարժականին և անհաստատոյն։ արար և միաբանութիւն ամենայն ազգաց տոմարի ընդ Հայոց»։ Իր ընդարձակ Հմտութիւններով և սուրբ վարքով Սարկաւագ վարդապետը «մեծիմաստին քան զնոլովս և հանճարեղն ամենայնի», ներգրաւեց Հաղբատի դրագրոցը բազմաթիւ ուսումնածարաւ երիտասարդների, որոնց մէջ յիշատակութեան արժանի են ժամանակագրութիւնների հեղինակ Սամուչէ Անեցին և Ալավկայ որդի Դաւիթը, որ «կանոնք գրեաց դիւրահաս»։ Հայ ժողովուրդը պատկառանքով խոնարհեցնում է իր գլուխր մեծ վարդապետի առաջ զիտութիւն և օրհնութիւն ստանալու նրանից։ յիշատակութեան արժանի է նրա մի

այլարանական երգը սարեակի ժաման, ուր պատկերացնում է միայնակեցի նըշշանակութիւնը. դրեւ է բազմաթիւ ճառքը և մի պատմութիւն Հայոց, որ դեռևս անծանօթ է բանասիրութեանը:

Միւս վանքերի մէջ առանձնապէս փայլեց Սևանի վանքը Թ զարում, ուր նշանաւոր հանդիսացաւ Մաշտոց Եղիշարդեցի կաթողիկոսը, որը մեր ազգին պարզեց Յովհաննէս պատմաբան կաթողիկոսը։ Հայ վանքերի մէջ առանձնապէս որպէս ուսումնական կենտրոն հանդիսացան նաև Թղենեաց Հաւուցթափ, Խոր Վիրապի վանքերը և Այրիվանքը։

Ժ դարում Հայոց աշքի ընկնող գպրոցներից մէկն էր համարում Արարատան Նիկ գաւառի Թեղուտ գիւղի վանքին կից գպրոցը։ Ասողիի վկայութեամբ, այստեղ գուստ ուսումնական կործով էին զրադում Երեմիա Թեղեկացին և Կիրակոս Գծծակերպ գիտնականը, որ բնակէր հողովակի յանապատին, որ Թեղենիսն կոչի, ի Նիկ գաւառից։

Այս գպրոցը իր գոյութիւնը պահել է մինչև ժֆ դարի կէսերը։ Գանձակեցին մանրամասն տեղեկութիւններ է հաղորդում այս գպրոցի մասին։

ԺԲ-ԺՓ դարերում ծաղկում է նաև Հաւուցթափ գպրոցը։ Այս գպրոցի սիւներն են հանդիսացել Մխիթար և Զաքարիա եպիսկոպոսները (ժֆ դար)։ Մխիթարի օրօք էր, որ այս վանքում Սիւնեաց իշխանները, Հայոց յայտնի վանքերի եպիսկոպոսներն ու վարդապետները, խոչը զպրոցների գլուխ կանդնած բարունապետները Հաւաքուեցին մի մեծ ժողովի և զրեցին իրենց բողոքի յայտնի թուղթը Գրիգոր Անաւրգեցուն։ Այս գպրոցի յայտնի մանկավարժներից նշանաւոր էր Եղիան։ «Եղիա ի Հաւուց Թառոյ, այն՝ որ գեղեցիկ կարգաւորեաց զպաշտօն վանից իւրոց, որպէս թէ ամենեցունց ընդ մի բերան հնչեն։ Եթէ բարձր և թէ ցած. և ոչ հարսաւահարէր ընկեր զրնկերն» (Գանձակեցի)։ Երաժշտութեան պատմութիւնն ուսումնասիրելիս կարող ենք Եզրակացնել, որ Եղիա վարդապետը խմբերգեր է զեկավարել, պահանելով Երդշախմբի բոյոր կանոնները։ Այս գպրոցի յայտնի աշակերտներից են Եղիշ Մկրտիչ, Թովմա, Յակոբ և այլք, որոնք ուսանել են յայտնի ուսուցիչ Յովսիկ և Եղիա վարդապետների մօտ։ Մանուէլ Բջնեցին փառարաննելով Հաւուցթառը, բացական շում է։

«Ցնծա, երաշարան, ով համալսարան,

Ուխտ եռչականուն

Սուրբդ մենաստան Հայու Թառ անուան,

Թառ քարգմանութեան»։

Ակսած ժֆ դարից յայտնի է դասնում նաև որպէս մշակոյթի կենտրոն Խոր Վիրապի վանքը։ Այդ գպրոցի հիմնադրումը իրաւամբ կատում է յայտնի իմաստասիք, անուանի մատենագիրն է։ Հայ մանկավարժութեան փայլուն աստղ Վարդան վարդապետ Արենելցու անուան էնա։ Արենելեան Հայուտանի ամենապայծառ հողեռականներից մէկն էր Վարդան Արենելցին, որը հանդիսացաւ Խոր Վիրապի գպրոցի հիմնագիրը։ Վարդան վարդապետ Արենելցու աշակերտներից մէկը, Գէորգ Լամբրոնացին, 1267 թուականին իր զրած տօնապատճառի յիշատակարանի մէջ խօսում է Վարդան վարդապետի՝ Խոր Վիրապի ուսուցչական գործունէութեան մասին։ «Որ ընդ ամենայն ժամանակի ի վերայ ամենայն մասանցն բարեաց, որով բոլորն կատարի առաջինութիւն, և զւուցչապետն ե զզործ ի դիր արկանել։ ընդ առնելին իծակցելով, որ ի գուուն սրբոյն Գրիգորի նստելով՝ զամենայն եկեղեցն աստուածայինս ուղղել ճանապարհ»։

Մենք ունենք այլ փաստեր ևս 1290 թուականին Խոր Վիրապի գպրոցի,

Վարդան վարդապետի և նրա աշակերտների մասին։ Վարդան վարդապետը 16 տորիներ չարունակ զեկավարել է այդ դպրոցը և վանքը վերածել կարեռը մը-շակութային կենարոնի։

Գեղարդայ վանքը գեռնես ի գարից յայտնի է ոչ միայն որպէս վանք, այյէ որպէս ուսումնատեղ։ Այդ դպրոցի առաջին ուսուցիչներից մէկն է եղել Դրիգոր Գոզիկ վարդապետը։ Նա յայտնի է եղել որպէս երաժիշտ։

Այս վանքի և դպրոցի ամենառավել ծաղկումը տեղի է ունեցել ԺԳ-ֆե գարերում և յատկապէս ժֆ գարում, երբ այս դպրոցի գլուխն էր կանգնած անուանի մատենագիր գիտնական Միթթար Այրիխանեցի վարդապետը։ Իրենց ժամանակին այս դպրոցի հետագա կապեր են ունեցել Գառնեցին, Մկրտիչ, Յով. Հանձնու և Կիրակոս Երդնկացի վարդապետները և ուրիշ շատ նշանաւոր մարդիկ։ Այբիկանեցուց յետոյ դպրոցի ամենից աւելի աշքի ընկնող դէմքը պէտք է համարեն Միթթոն Այրիխանեցուն։

Միմէնից յետոյ Այբիկանքի դպրոցում անուանի ուսուցիչներ են դառնուած և Յովկաննէս վարդապետները, որոնց մասին նրանց աշակերտներից մէկը ասում է։ «Բազմէրախտ հողեւոր հայրերն են մեր վարժապետներ՝ նիւրու, և Յովկաննէս Մալկող, որ բազում երախտիք ունին ի վերայ մեր»։ Նոյն դպրոցում յայտնի նկարիչներ են եղել Ստեփաննոս և Մատթէոսը. Գարեգին կաթողիկոս Յովսէիկեանց իրաւամբ բացականչում է, որ «ԺԵ գարում Այբիկանքը կատարելապէս ծաղկած վիճակի մէջ է եղել»։

Ժֆ գարում Յովկաննէս Արամեսցի վարդապետի չնորհիւ ծաղկում է Հաղարծնի վանքը Զարարեանների օժանդութեամբ։ Հաղարծնի վանքի դրաբոցի հիմնադրումը կապուած է անուանի երաժշտագիտ Խաչատուր վարդապետ Տարօնեցու անուան հետ։ Հաղարծնի յայտնի վանք և ուսումնատեղ լինելու մասին վկայութիւն տալիս է Վարդան Արեկեցին։ Հաղարծնի վանքը ու նրա դպրոցը առաւելապէս յայտնի դարձան այն ժամանակ, երբ նրա գլուխն էր կանգնած Խաչատուր վարդապետ Տարօնեցին։ Գանձակեցին վկայում է։ «Խաչատուր Տարօնացի, այր առաջնին և գիտութեամբ հոչակեալ, մանաւանդ երաժշտական արուեստի»։ Սա պայծառացոյց զուխտն՝ որում առաջնորդ էր ինքըն, որ յառաջ քան զգալն նորա՞ ամայի էր և խամրացեալ»։ Այնուհետեւ, ինչպէս երաժշտութիւնը, այնպէս էլ այլ իմաստասիրական զիտութիւնները Տարօնացին ուսուցանում էր Հաղարծնի դպրոցում, իր չուրջը հաւաքած աշակերտներին։ Ժամանակակից պատմիչը հաստատում է. «Սա երեր զիւազն ի կող մահս յարեկելց, զանմարմին եղանակն ի մարմին ածել, զարեալն յմաստնոց, որ ցայն ժամանակս չե էր սփռեալ ընդ աշխարհս։ Սա եկեալ գրեաց և ուսուց բաղմաց. և բազում հանդիսա եղել ի ծանր աշխատութեանց»։

Խաչատուր վարդապետ Տարօնացին այս վանքում առաջինն էր, որ երդէց «Խորհուրդ խորին»ը։

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆՆԵՐ ԿԻԼԻԿԵԱՆ ԹԱԳԱԱԻՈՒՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Ամին 1064 թուականին զրաւուեց Սելջուկ Թուրքերի կողմէից, որի հետեւանքով ինչպէս Հայ ժողովուրդը, այնպէս էլ Հայկական Հայրապետական Աթոռը զաղթեց գէպիկիա։ Այդ շրջանում յատկապէս յատկանշական է րժ զգել Սև Լեռնան վրայ ծաղկող Հայ վանքերը և նրանց կողքին վարդապետարանները։ Հակառակ քաղաքական անկայուն գրութեան, վանքերին կից վարդապետարանները, չնորհիւ Պահլավունի կաթողիկոսների ճիգերին ու ջանքե-

բին և Հայ իշխանների պաշտպանութեան և գործակցութեան, գիսաւորների տպաւորութիւն թողնող կարձակեաց, բայց փայլուն արդիւնքով զդալի ծառայութիւն են մատուցում, այն աստիճան, որ ստեղծուում է շատերի կողմից մեր զրականութեան և արուեստի «արծաթէ գար» որակուածք : Վարդապետարանների աւելի աչքառու կայաններն են Շուղը, Ընկուզուտը, Հետունեաց անապատը, Հոռոմկյան, Կարմիր վանքը, Արքակաղնի վանքը, Դրազարկը, Կաստաղնի վանքը :

Այն շրջանում գործող տեհառուու վարդապետներն են եղի Գրիգոր Վրկայասէր կաթողիկոսը, Այր քաջակիրը և ամենայն հմտութեանց հետեւալ, և բովանդակ հասեալ ի վերայ Հին և Նոր Կտակարանացն Աստուծոյ... ընդ իմաստաէրն նստէր ի յամբիոնիցն ի մէջ սրբոյն Սոփիի» . «Խօսէր ընդ յարդապետացն Հոռոմոց և ի կարգին վարդապետացն էր յաղագս Հայոց» : Այնուհետև նա կերան վանքերում ամիշտ պարապեալ ընթերցման սուրբ զրոց և աստուծախօս աղօթից» :

Ծնորհալին աւելի ժամերամասն է խօսութ Գրիգոր Վկայասէրի Աև Լեռան վրայ անցկացրած կրթական գործունէութեան ժամանակ :

«Ի Սեաւ մըքին լեռան անուանեալ,
Զքանի սիրոզն հաւաքեալ,
Եւ առ ինքեան բնակեցուցեալ,
Զգիրս հոգւոյն միշտ ընթերցեալ,
Եւ ընդ նասին յար խօսակցեալ» :

Կարմիր վանքը Քեսունի ժօտ, Շուղը անուանուած յերան վրայ, երբեմն ունեցել է շատ փայլուն վիճակ : Այդ վանքում է փայլի Ստեփանոս Մանուկ վարդապետը՝ իր անունով հոչակ տալով վանքին : Նրա մասին յիշատակադիրն ասում է . «Եթանուկ մի քահանայ գոլով և գարծեալ ի Հին և Նոր Կտակարան վարդապետական ուսմամբ՝ ի հօրեղորէն իւրմէ, անուն կոչեցեալ ըՍտեփանոս, որպէս ութ և տասնամենից, սորա ընդ այլ փախստական հասեալ ի Քեսուոյ, ի մէջ հոչակ ուուրը ուլիսն, որ Կարմիր վանքն կողիւր . ի նոյն տեղին ընակեցաւ, բայց ծածկեաց զանուն վարդապետութեան փասն մանկական հասակին : Ստեփանոս Մանուկի անունը շրւտով տարածուում է : Այս անուանի և պերճախօս վարդապետի ժօտ են հաւաքում բազմաթիւ աշակերտներ, որոնցից նշանաւոր են Հանդիսանուում և իրենց ստացած ուսմամբ և կրթութեամբ փայլում են Գրիգոր Փոքր Վկայասէր, Ներսէս Շնորհալի, Սարգս, Իշնատիռ և Բարսեղ մեկնիչները, բոլորն չէ «Ծնորհալի» տիտղոսով պատուած : Ստեփանոս Մանուկի աշակերտներից ներսէո՞ Մատթէոսի, Բարսեղը՝ Մարկոսի, և Իշնատիռուր՝ Պուկասի Աւետարանների մեկնութիւնները գրել են : Խսկ Սարգիսը՝ Կաթողիկեաց Թուղթինը :

Ստեփանոս Մանուկը մինչեւ իր մահը մանկավարժական գործունէութիւն է ծաւալել. հայած իրենից ոչ մի գրաւոր աշխատութիւն չի հասել մեզ, սակայն իր ձեռքի սակ մարզուած աշակերտների գրաւոր աշխատութիւնները ցոյց են տալիս, թէ «անիկա մեթոս ունեցող ոււուցիչ մը և աւելի գործնական ու հմուտ անձ մը եղած է» (Ալպօյաճեան) :

Ստեփանոս Մանուկի աշակերտաներից են Հանդիսացել նաև Կարմիր վանքում Ներսէս Լամբրունացին, որ տնելյականին կրթութեամբ յառաջ էր :

Վկայութիւններ կան, որ արեւելիան Հայաստանի վարդապետներից էլ են զնացել կիրիկիա՝ Կարմիր վանք : Դրանցից նշանաւոր է հանդիսացել Մխե-

թար Գոշը, որ ըստ աւանդութեան, ծածկել է ինքնութիւնն ու աստիճանը, որպէսզի Հայրաւորութիւն ունենայ սովորելու Սահմանառու Մանուկի դպրոցում:

Կիլիկիայի Հայկական վանքերի կրթութեան, գիտութեան և արուեստի կենարունները ուսումնակրելիս և քննարկելիս, Համոզուում ենք, որ Դրազարկը և Սկեռան Հանդիսացել են քաղաքական-վարչական կենտրոններ, իսկ Հոռմէլան հոգեոր կենտրոն իր վարդապետարանով:

Հոռմէլայի վարդապետանոցը հիմնադրուած է Ներսէս Շնորհալու կողմից. նրա ուսանողներից մէկն է Գրիգոր Պահապունի Տղայ կաթողիկոսը (1173 - 1193):

Դժբախտարար Հոռմէլայի վարդապետարանի կեանքը կարճատ է լինում, որովհետ այն գրաւուելով Եգիպտացիների կողմից (1292 Յուլիս 28ին), Հայոց Հայրապետական Աթոռն էլ փոխադրուում է այնտեղից իր վարդապետարանով:

Դժբախտարար Հոռմէլայի վարդապետանոցը ծառայել է Հայրապետանոցին որպէս նրա կրթարանը: Այստեղ Գէորգ Լոռեցին իրեկ կաթողիկոս գործել է, օգուտ տարիով այդ դպրոցին և վանքին: Դժբախտար միարանութեան գործն է եղել արտադրել մատեաններ, ինչպէս նաև Ս. Գրքի առւրո Հայրէրի աշխոտութիւնները: Այս իսկ պատճառով այդ վանքը ժամանակակիցներից կոչուել է հռչակաւոր վանք:

Ճ՛ֆ գարում Մոք մօտերում ծաղկում է Արքակազնի վանքը իր դպրոցով: Այդ ուխտու նման խստակրօն կացութեամբ յայտնի է Կաստաղոնի վանքը Վահարերի մօտ, իր ծագմամբ ամենաշինը Կիլիկիոյ վանքերի մէջ: Այս վանքում, ինչպէս յիշում է Ուռհայցին, ճղնաւորներն անդամ պարապում էին դիտութեամբ:

Ա. Էջմիածնի ՎԱՆԻ ԴՊՐՈՑԸ

Պատմական Հայաստանի սրտում՝ Արարատեան դաշտավայրում ժեղարում վերահսկաատուած Հայրապետական Աթոռը գոյութիւն ունեցող պարմաններում, ձղուում էր Հայ ազգային-եկեղեցական կեանքի գարթօնքին:

Սիւնեաց և Վասպուրականի պարոցների երազը այդ էր, երբ ողի ի բը-ոին պայքարում էին Աթոռով փոխադրութեան Համար:

Հոգեոր և մշակութային պատմական այդ կենտրոնի շուրջ աշխարհիկ և Եկեղեցական գործէնների համախմբումը Սահմանառու Օրբելիանի բառերով փորձում էր վերապանուած տեսնել զգաթոռ Բագաւորին և զգաւազան պատրիարքին նորից ծաղկած, այսինքն գլուխ բերէր Հայրաստանի լիակատար անկախութիւնը:

Հայրապետական Աթոռը 1443 թուականին վերասին իշմիածին տեղափոխուելուց յետոյ նոր Բափով զարկ արուեց Հոգեոր-մշակութային կեանքի բարձրացման և կազմակերպման: Վանական մշակութային կեանքը Միւն Անապատի օրինակոյ ծաղկեց, բացուեցին լուսաւորութեան նոր կենտրոններ:

Վերադարթման այս հզօր ալիքում, բնական է, ժեծ բաժին ունէր էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսարանը՝ ամբողջ Հայութիւնը անխորսակելի կերպով իրար զօղող ամենայուսալիք և վատահելիք ուժը: Խսկ էջմիածնին կարող էր զործել իր դիբքին վայել մի դպրոցի միջոցով միայն, որի գործիչները կրթուած լինէին իր հետապնդած եկեղեցական ազգային սուրբ ձղուուներով:

Էջմիածնի նոր դպրոցը հիմնադրուեց 1441 թուականին՝ Աթոռի փոխադրութեան զուգընթաց :

Պարզ է, որ այս շփոթ և խառնակ ժամանակաշրջանում կրթական դրձը մեծապէս տուժեց : Այնուամենայնիւ, գործում են մի շարք դպրոցներ, Հայաստանում առկայժ պահպանուում է ժտաւորական կեանքի զողղովուն ջահը :

Այնաեղ նոյնիսկ հանդիպում ենք իրենց ժամանակի համար ուշադրու, զարգացման բարձր աստիճանի հասած մի քանի հանաւոր մարդկանց ու կենուբունների :

Այդ նշանաւոր ժարդկանցից մէկն է Ստեփաննոս Սալմաստեցի (1543-1552) կաթողիկոսը, երկրորդը՝ Միքայէլ Սեբաստացի կաթողիկոսը (1567-1576), որոնք Հայաստանի այլ վանքերում իրենց ուսումը կատարելազործելուց յիտոյ այն փոխադրեցին էջմիածնին : Էջմիածնի դպրոցը բացուեց նախ Երևանում, Սուրբ Անանիա անապատում (այժմեան Ս. Զօրաւոր եկեղեցի) . Մովսէ Տաթևացու գործունէութեամբ հիմն է դրւում Երևանեան վարդապետարանի, որ Տաթևացու կաթողիկոսանալով իր ծաղկման բարձրակիտին է հասնում : Իր ողջ գործունէութեանը եկեղեցու պայծառացման, ուսման տարածման նուիրած, Մովսէս Տաթևացու շուրջ խոստմալից և ջանասէր աշակերտներ խմբուցին : Այդ դպրոցի սիւնն էր Մելքիսեդեկ Վժանցին : Արիէլոն Զուլյայցու օրօք, 1640 թուին, Փիլիպոս կաթողիկոսի շրջանին (1633 - 1655) դպրոցը փոխադրուում է էջմիածնին : Մովսէս Գ Տաթևացուն (1629-1632) յաջորդում է Փիլիպոս Ա Ազրակեցին (1633-1655), որը իր ժամանակի ուսեալ հոգեուրականներից էր : Ազրակեցին 1640 թուին Յովհաննավանքում գործող վարդապետարանը վերջնականապէս փոխադրում է էջմիածնին :

Յակոր Դ Զուլյայցին (1655-1681) կաթողիկոսանալով, Ս. էջմիածնի դպրոցին մեծ զարկ է տալիս չնորհիւ Ստեփաննոս Լեհացուն : Յակոր Դ Զուլյայցու վախճանումից յետոյ սկսում է այեկոծ մի շրջան : Եղիազար Այնթազցի (1681-1691) և Նահապետ Ռուսայցի (1691-1705) կաթողիկոսների օրով էջմիածնի վարդապետարանը զգալի վայրէջք է ապրում :

ԺԼ դարում, Ճորժիւ Սիմէն կաթողիկոս Երևանցու ջանքերի, Ս. էջմիածնի դպրոցը վերէլք է ապրում, Պետրոս եպիսկոպոս Երեզումեանի ուսուցչապետութեամբ : ԺԹ դարի արշալոյսին Դաւիթ-Դանիէլեան պայքարի դրժնգակ ժամանակաշրջանին, Ս. էջմիածնի դպրոցը համարեա թէ փակում է . վերաբացում է Եփրեմ կաթողիկոսի օրօք՝ 1813 թուականին Վյայելուշ և ազգասիրական փութով եռանդեամբ սկիզբն առնէ հիմնարկութեան մեծակառոց ուսումնարանին էջմիածնի, ի հիւսիսոյ յարենից վանացն ի վերայ տանեաց դասակարգի սենեակաց ժիւրանից» : Այդ դպրոցում իրենց ուսումն են ստացել Խաչատուր Արովիեանը, Մեսրոպ Թաղիադեանը, Մսեր Մսերեանցը և իր ժամանակի աշքի բնկնող նշանաւոր եպիսկոպոսներ և վարդապետներ :

1836 թուին հրատարակուեց Պոլոտենիան : Այդ կանոնադրութեան համաձայն կաթողիկոսարանն ու թեմական կենարուները պէտք է ունենային իրենց համապատասխան դպրոցները, պետութիւնից հաստատուած ծրագրով և պետական վերասկզբութեան ներքոյ :

1836-1840 թուերից էջմիածնի դպրոցը գործում է համաձայն Պոլոտենիայի տրամադրութիւնների : Կարբեցու օրօք էջմիածնի ժառանգաւորաց վարժարանը որոշ վերելք է ապրում, իսկ Աշտարակեցու շրջանին այն որոշ չափով առաջ է մղում չնորհիւ Յովհաննէս եպիսկոպոս Շահիսաթունեանի, ու յարատեսում Մատթէոս Ա և Գէորգ Դ կաթողիկոսների օրօք : Ի վերջոյ Գէորգ Դ կաթողիկոսին յաջողում է 1874 թուին բանալու Մայր Աթոռում մի ճեմարան,

յարմար չէնքով և իր ժամանակաշրջանի համար լաւագոյն ծրագրով։ Գէորգ-եան ձեմարանը քառասուն տարրուայ շրջանին Հայ Եկեղեցուն պարզեց ոչ մի-այն ուսեալ հոգեորականներ, այլև ԺԹ դարրում Հայ մշակոյթի ծաղկումն ու առաջադիմումը կապուած է Գէորգեան ձեմարանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մատենադարանի և նրան տպարանի հետ։ Գէորգեան ձեմարանը փակուեց 1918 թուականին։ Ս. Էջմիածնում 1924 թուին վերաբացուեց Հոգեոր ձեմարան, սակայն նա ունեցաւ շատ կարճատև կեանք՝ հազիւ մէկ տարի։ Ս. Էջմիածնի ներկայիս գործող Հոգեոր դպրոցի առկայութիւնը մենք կը պարտինք երջան-կայիշատակ Գէորգ Զ կաթողիկոսին, իսկ նրա ծաղկումն ու յարատենումը՝ նո-րին Ս. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Առաջինի անդուլ, չնորհակալ գործունէու-թեան արդինքն է, որտեղ ինքն էլ երկար տարինք դասաւանդում է։

Ս. Էջմիածնից յետոյ երկրորդ տեղն է բռնում Հայ Եկեղեցու նուիրա-պետական աթոռների շարքին Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Պատրիարքական Աթոռը, որի գործունէութեան մասին մենք այստեղ չենք խօսում, քանի որ այդ մասին արդէն մի առանձին ուսումնասիրութիւն է պէտք։

Կ. Պոլիս աթոռը 19րդ դարի վերջը ծաղկեցրեց, չնորհիւ Օրման-եան և Դուրեան սրբազանների, Արմաշի դպրեավանքը (Զարխափիան Ս. Աստ-ածածինի վանքը, Նիկոմիդիոյ մօտ)։ Այդ վանքի պարզեած ուսեալ միարա-նութիւնը մեծ գործ կատարեց մինչև 1915 թուականը, հրատարակելով նաև Շլոյա անունով թերթը։

Վարագայ վանքի պարոցի պատմութիւնը հնամենի վաղեմութիւն ու-նի։ Նրա մասին յիշասակութիւններ կան, ըստ որոնց սկսած 14րդ դարի սկիզբ՝ ներից այդ դպրոցը երբեմն կարմ և երբեմն էլ երկարտև ընդհատումներով իր գոյութիւնը պահպանել է մինչև ներկայ դարի սկիզբները։ 19րդ դարի 70ական թուականներին Մկրտիչ Արքմեան Հայրիկը հիմնեց այստեղ մի դպրոց, հրա-տարակեց Ալրծիւ Վասպուրականից անունով թերթը, որը սննդանիկն էր Հա-յոց հողի վրայ։ Տարիներ անց նա նոյն կեանքն արծարծեց նաև Տարօնի Ս. Կա-րապետ վանքում։ Յատկանշական է նաև նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքում բացուած դպրոցը Յովսէփ Արքեակիկոպոս Արդութեանի չնորհիւ 18րդ դա-րում։ Այդ համրաւառոր արքեպիսկոպոսը նոյն վանքում հաստատեց նաև տը-պարան, ինչպէս նաև մարդասիրական ընկերութիւն։ 1850ական թուականնե-րին Հարիճանյի վանքում Յովսէփ քահանայ Կոստանեանը և Ստեփանոս Եպիս-կոպոս Խաժակեանը հիմնադրեցին մի դպրոց։

Այս բոլորից յետոյ մեզ ննում է երախտագիտական խօսք ասել մեր ե-րանաշնորհ նախնիներին, որոնք գինեակ և մութ լրջաններում Հայ Եկեղեցու կամարների տակ քրիստոնէական պլալան մոմերի հետ միասին վառ պահեցին նաև մշակոյթի ջահը, պարզելով մեզ գիտութիւն, յոյս, լոյս և ազգային ա-նաղարա դիմագիծ։

Այսօր, երբ մեր Հայրենիքում ծաղկում է գիտութիւնը, ունենք հա-մալսարան, գիտութիւնների ակադեմիա, բազմաթիւ դպրոցներ, և օտար եր-կրներից մեր վերածնուած Հայաստան աշխարհն են դալիս օտար երիտասարդ-ներ՝ ստանալու մասնագիտական կրթութիւն, ակամայից յիշում ենք նրդ դարի մեր հեռագնաց վարդապետներին, որոնք իրենց ուսումը կատարելագործելու համար գնում էին Աթէնք, Պոլիս կամ Աղեքանդրիա։

ՎԱՀԱՆ ԵՊՍ. ՏԵՐԵԱՆ

(Նար. 3 և վերջ)



* Դշ. 2 Յունիս.— Վաղուած Համբարձման տօնին առթիւ, կէսօրէ եւք, Գերշ. Տ. Շահէ Արքնապ. Աճէմնանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով բարձրացան Զիթենեաց լեռ ուր Համբարձման սրբավայրին Վրուայ կառուցուած մեր վրանամատուին մէջ պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը:

— Գիշերասկիզբին, առյան վայրին մէջ պաշտուեցան Եկեստէ և Հսկման կարգեր, դարձեալ նախագահութեամբ Գերշ. Տ. Շահէ Արքնապակոպսի: Ապա կատարուեցան գիշերային և առաւտեան ժամերգութիւններ, վերջինը՝ Համբարձման մատուին մէջ: Արարողութիւնները տևեցին մինչև գիշերուան ժամը 9.30, որով եւք բոլորն ալ վերադարձան Մայրավանք:

* Եշ. 3 Յունիս.— ՀԱՐՄԱՆՉՈՒՄՆ ՏԵԱՐՆ ՄԵՐՈՅՑ: Առաւոտուն, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը, երեկուան մասն, ինքնաշարժներով բարձրացան Զիթենեաց լեռ, ու «Հրաշափառ»ով մտուր գործեց Համբարձման սրբավայրը, ուր մեր վրանամատուին մէջ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց և Համբարձման խորհուրդին շուրջ բարողեց Գերշ. Տ. Շահէ Արքնապ. Աճէմնան, բարձր ունենալով «Եւ ահաւասիկ ես ընդ ձնզ եւ լամենայն աւորս, մինչև ի կատարած աշխարհի» (Մատթ. 11. 20): Ամեն. Պատրիարք Ս. Հայրը նախագահեց Մայր Աթոռոյ Սիսէն Ս. Քջմիածին փոխադրութեան տարեդարձի առթիւ կատարուած «Հայրապէտական Մաղթանք»ի արարողութեան, իսկ Գերշ. Պատարագի Արքավանք՝ Ս. Պատարագէն եւք սրբավայրին առջև կատարուած «Անդաստան»ին:

— Կէսօրէ եւք, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Անդաստան»ին նախագահեց Հոգ, Տ. Կիւրեն Ս. Վոր. Գարիկնան:

* Ծր. 5 Յունիս.— Ս. Պատարագը մատուցուեցան Մայրավանքի տանիքին վրայ բացուող Ս. Համբարձում վերնամատուին մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Գեղարք Արք. Տառուղարեան:

— Բ. Մաղկազարդի նախատօնակը պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց եկեղեցին մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքնապ. Ասպաննան:

* Կիր. 8 Յունիս.— Երկրորդ Մաղկազարդ: Առաօտեան ժամերգութիւնը պաշտոնացաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապէտ: Ժամարարն էր Հոգ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

* Ծր. 12 Յունիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայրավանքի տաճիքին վրայ բացուղ Ս. Առաքելոց վերնամատուիխն մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Գէորգ Վրդ. Պարույր Արք. Մելքոննեան:

— Հոգեգալստեան հանդիսաւոր նախատօնակը պաշտուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Շահէ Արքեպոստ: Անէմեան: Ապա կատարուեցաւ քահանայական կոչման արարողութիւնը Ս. Աթոռույն Հանդաւ Բարձ. Պարույր Արք. Մելքոննեան:

— Գիշերապէտին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցան Եկեղեցի և Հակման կարգեր, դարձնալ նախագահութեամբ Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոսի:

* Կիր. 13 Յունիս.— ՀՈԳԵԳԱԼՈՒՍ: (Բարեկենաղան Եղիական պահոց): Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց, Պարույր Մարկարագի քահանայական օծումն ու ձեռնադրութիւնը կատարեց և Մատուեսի Աւետարանին Ֆիուսի՝ Զերեթեան եղբայրներուն ուղղած «Կարէ» բանակը գոր ընպելոց նմ» խօսքերը իրեն քնարան ունեալով քարոզեց Գերշ. Տ. Շահէ Արքեպոստ: Անէմեան: Նորբնծան կոչուեցաւ Տ. Հայկացն Արքեպոստ:

— Կէսօրէ եւր, Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»ին ևս նախագահն Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս, որ ապա կատարեց վեղարի տրչութիւնը նորունացին: Որմէ եւր, Հոգ. Տ. Մայտուց Վրդ. Բարիկուսեանի գոյնաւորութեամբ, Միարան Հայրեր միջնացան Սիրուի Վերջին Ընթրեաց վերնատունը, որ կատարուած ընթերցումներէն և շարականներու երակողութեանը եւրը Հոգ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գարիկեան ըրաւ հակիրճ պատմականը սրբավարութիւնը:

* Ծր. 19 Յունիս.— Է. օր Հոգեգալստեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայրավանքի տաճիքին արևելակողմը գտնուող Ս. Հոգու մատուիխն մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Անան Վրդ. Ղարիկեան:

* Կիր. 20 Յունիս.— Ֆիշատակ Ֆիշակի մարզարտին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնատան մատուիխն մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Գեղարդ Արք. Տափուլարեան:

— Ս. Հորիսիսիւնանց նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապէտաց եկեղեցին մէջ: ՀԵ: Եղիական էր Գերշ. Տ. Շահէ Արքեպոստ: Անէմեան:


* Բշ. 21 Յունիս.— Ս. Կոսանացն Հոհիսիսիւնանց: Առաօտեան ժամերգութիւնը պաշտոնացաւ Ս. Հրեշտակապէտաց եկեղեցին մէջ, իսկ Ս. Պատարագը՝ Եկեղեցի աւանդատան՝ Ս. Հորիսիսի մատուիխն մէջ: Ժամարարն էր Հոգ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

* Որ. 25 Յունիս.— Ս. Լուսաւորչի Ելն ի Վիրապէն տօօի նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահից Լուսաւարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

* Ծր. 26 Յունիս.— Ս. Գրիգորի Լուսաւորչին (Ելն ի Վիրապէն): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորչի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Գէորգ Վրդ. Պարույր Արք. Նազարեան:

— Կաթոլիկէ Եկեղեցւու Ս. Էջմիածնի տօնին նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, նախագահութեամբ Լուսաւարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս Ապահանի: Արարողութեան աւարտին, ծնրադիր «Տէր ողորմիա» երգուեցաւ:

* Կիր. 27 Յունիս.— Տօն Կաթուղիկէ Եկեղեցւու Ս. Էջմիածնի: Ս. Պատարա-



* Բշ. 14 Յունիս.— Երևանյան ժամը 6ին, Հոգեգալստեան տօնին առթի, Որուաց Միեւարք Արշիմանստիք Աէրաֆիմի կողմէ Որուաց Վանքի պահին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Շահէ Արքապս. Ա-ձեմեան, Հոգ. Տ. Կիրէ Ս. Վրդ. Գարիկեան և Տիար Գ. Հինդիեան:

* Կիր. 20 Յունիս.— Կեսօրէ առաջ ժամը 10ին, Պէճիքան Պուռպան թա-գաւորի գահակաղութեան 25ամսեակին առթի, Ֆրանչիսկաններու Վանքի ե-կեղեցին մէջ կատարուած Գոհարանական Մաղթանքի արարողութեան ներ-կայ գտնուեցան Գերշ. Տ. Շահէ Արքապիսկոպոս:

— Նոյն առթի, երեկոյեան, Պէճիքական Ընդի. Հիւպատոսին կողմէ հիւպա-տոսարանին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Հոգ. Տ. Կիրէ Ս. Վարդապէտ, Աւագ Թարգման Հոգ. Տ. Գերզ Վարդապէտ և Տիար Գ. Հինդիեան:

— Նոյն օրը, ժամը 11ին, Ս. Ցարութեան Տաճարին մէջ, Գոհգործալի վրայ, Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքի կողմէ կատարուած քահանայի մը և երկու սարկաւագներու ձեռնադրութեան արարողութեան ներկայ գտնուեցան Հոգ. Տ. Կիրէ Ս. Վարդապէտ:

* Եշ. 24 Յունիս.— Երեկոյեան, Սպանիոյ նոր թագաւոր Խորան Քարլոսի ան-ուան տօնին առթի, Սպանական Ընդի. Հիւպատոսին կողմէ հիւպատոսարա-նին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Հոգ. Տ. Կիրէ Ս. Վրդ-օ. արիկեան, Հոգ. Տ. Գերզ Վրդ. Նազարեան և Տիար Գ. Հինդիեան:

* Դշ. 30 Յունիս.— Երեկոյեան, Ն. Արքութիւն Պողոս Զ Պապի գահակաղու-թեան տարեդարձին առթի Պապական Նոյիրակի թանարանին մէջ տրուած րդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապէտ Գերշ. Տ. Հայրիկ Արք-եպս. Աղանեան, Հոգ. Տ. Գերզ Վրդ. Նազարեան և Տիար Կ. Հինդիեան:

Կը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարան էր Հոգ. Տ. Անան Վրդ. Ղարիպեան: «Հայր մեր»էն առաջ կատարուեցաւ «Հայրապէ-տական մաղթանք վասն Ս. Էջմիածնի»՝ ճախագահութեամբ Լուսարարապէտ Գերշ. Տ. Հայրիկ Արքապիսկոպոսի:

— Կեսօրէ եւր, Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդաստան»ին ճախա-գահեց Հոգ. Տ. Կիրէ Ս. Վրդ. Գարիկեան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հովհան ու Հօնը	թ. Պ. Գ.	150
----------------	----------	-----

ԿՐՕՆԱԿԱՆ

Աստուածային Տնօրինութիւն	ՆՈՐԱՅՐ ԱՐՁԵՊՍ.	153
--------------------------	----------------	-----

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Վարան Գողթնացին	ԵՂԻՎԱՐԴ	154
-----------------	---------	-----

ՑՈՒՑԵԼԵԱՆՆԵՐ

Ն. Ամեն. Պատրիարք Ս. Հօր գրական գործունեութեան քառասունհինգամեանի հանդիսութիւնը Հայաստանի մէջ	159
---	-----

Բացման Խօսք	ՍԵՐՈՎԲԷ ԱՐՁԵՊՍ. ՄԱՍՈՒԿԵԱՆ	159
-------------	---------------------------	-----

Նորից մի պայծառ զօրաւոր գրիչ	ՄԱՐՕ ՄԱՐԳԱՐԵԱՆ	162
------------------------------	----------------	-----

Զենադութիւն Կուսակոցն Աբեղայի	167
-------------------------------	-----

ՊԱՏՄԱԿԱՆ

Ոլրուագծեր Հայոց Վանքերին կից Վարդապետացմանը - տարանների Պատմութիւնից	ՎԱՀԱՆ ԵՊՍ. ՏԵՐԵԱՆ	169
--	-------------------	-----

Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

Եկեղեցականք - Բեմականք	176
------------------------	-----

Պաշտօնականք	178
-------------	-----

Բովանդակութիւն	179
----------------	-----

C O N T E N T S

EDITORIAL

The leader and the led	<i>T. B. K.</i>	150
------------------------	-----------------	-----

RELIGION

Divine disposition	<i>Archbishop Norayr</i>	153
--------------------	--------------------------	-----

POETRY

Vahan of Koghten	<i>Yeghivart</i>	154
------------------	------------------	-----

ANNIVERSARIES

Celebrations held in Armenia to mark the 45th anniversary of H. B. the Patriarch's literary activities	<i>Archbp. Seroupe Manoogian</i>	159
--	----------------------------------	-----

Opening remarks	<i>Archbp. Seroupe Manoogian</i>	159
-----------------	----------------------------------	-----

Main speech	<i>Maro Markarian</i>	162
-------------	-----------------------	-----

Ordination in the St. James Cathedral		167
---------------------------------------	--	-----

HISTORY

On the history of Armenian Theological Schools	<i>Bp. Vahan Derian</i>	169
---	-------------------------	-----

Monthly news from the Armenian Patriarchate		176
---	--	-----

Contents		180
----------	--	-----

Yearly subscription: Dollars 10 U. S.
 All correspondence should be addressed to:
 Ara Kalydjian, The St. James Press
 P. O. Box 14001, Jerusalem — Israel